YOUTH INITIATIVE CENTRE

# 10 YEARS FOR YOUTH WITH YOUTH BY YOUTH

ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ANNUAL REPORT
2018



Dear colleagues and dear youth,
We are pleased to present you the annual report 2018 of Gyumri "Youth Initiative Centre" NGO.

YIC NGO team, consisting of skilled, professional youth with innovative ideas, well recognized in the youth field, managed to achieve tangible success in the development of youth field and youth work in Armenia during 2018.

Youth Initiative Centre cooperating with local and international organizations, initiated and implemented various programmes on a variety of topics, enabling to communicate and cooperate with young people and experts from local and different countries during 2018.

The biggest achievement of 2018 was probably the creation of the “Youth House” Open Youth Centre, which allowed more than 600 young people to get an education in a safe space and spend their leisure time efficiently.

I would like to point out with great pride that YIC celebrated its 10th anniversary in December 2018. Over the past 10 years, the organization has overcome a number of difficulties, gained recognition and has become a platform for education, development of many young people, contributing to the creation and further development of the youth sector in Armenia.

On behalf of our team, I would like to express my gratitude to all our partners, international and local advisory boards, members and volunteers of the organization, for being with us all the time and support us.

Best wishes
Artur Najaryan
YIC NGO PRESIDENT

Հարգելի՛ գործընկերներ և սիրելի՛ երիտասարդներ,
Սիրով Ձեզ ենք ներկայացնում Գյումրու «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» հասարակական կազմակերպության գործունեության ամենամյա՝ 2018 թվականի հաշվետու զեկույցը:

ԵՆԿ ՀԿ թիմը, որը կազմված է ոլորտում փորձ և ճանաչում ունեցող, արհեստավարժ և նորարար գաղափարների կրող երիտասարդներից, 2018 թվականի ընթացքում կարողացավ շոշափելի հաջողություններ գրանցել Հայաստանում երիտասարդական ոլորտի և երիտասարդական աշխատանքի զարգացման գործում:
ԵՆԿ ՀԿ-ն, համագործակցելով տեղական և միջազգային տարբեր կազմակերպությունների հետ, 2018 թվականին նախաձեռնել և իրականացրել է մի շարք ծրագրեր՝ ամենատարբեր թեմաներով՝ ընձեռելով տեղի և տարբեր երկրների երիտասարդների և ոլորտի փորձագետների հետ շփման ու համագործակցության հնարավորություններ:

Անցած 2018 թվականի ամենամեծ ձեռքբերումն, թերևս, եղավ «Երիտասարդների տուն» բաց երիտասարդական կենտրոնի ստեղծումը, որը մեկ տարվա ընթացքում ավելի քան 600 պատանի-երիտասարդի ապահով տարածքում կրթվելու և իր ժամանցն արդյունավետ անցկացնելու հնրավորություն ընձեռեց:

Առանձնակի հպարտությամբ ցանկանում եմ մատնանշել, որ ԵՆԿ ՀԿ-ն 2018 թվականի դեկտեմբերին մեծ շուքով տոնեց իր 10-ամյակը: 10 տարիների ընթացքում կազմակերպությունն անցելով մի շարք դժվարությունների միջով, կայացավ, ստացավ ճանաչում և շատ երիտասարդների համար դարձավ կրթվելու, կայանալու և զարգանալու հարթակ՝ նպաստելով Հայաստանում երիտասարդական ոլորտի կայացմանն և շարունակական զարգացմանը:

Մեր թիմի անունից երախտագիտությունս եմ ուզում հայտնել մեր բոլոր գործընկերներին, կազմակերպության միջազգային և տեղական խորհրդատվական խորհուրդներին, անդամներին և կամավորներին՝ մշտապես մեր կողքին լինելու, մեզ աջակցելու համար:

Լավագույն մաղթանքներով՝
Արթուր Նաջարյան
ԵՆԿ ՀԿ ՆԱԽԱԳԱՀ

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

# CONTENT


Մեր մասին ............................................................... 4

Մենք 10 տարեկան ենք ................................................ 6

Ռազմավարական նպատակ 1 ...................................... 7

Erasmus+ Youth. Տեղեկատվական կենտրոն Հայաստանում ............................................................... 8

Շարժունակության ծրագրեր ...................................... 10

«Սահմաններից վեր». Հայաստան-Թուրքիա երկխոսության ծրագիր ............................................... 12

Հայաստան-Գերմանիա դպրոցների փոխանակման ծրագիր ............................................................... 13

Արշավ ԵՆԿ-ի հետ ..................................................... 14

Լեզվի ակումբներ ....................................................... 15

Ուրբաթօրյա սրճարան ............................................... 16

Ռազմավարական նպատակ 2 .................................... 17

«Երիտասարդների տուն» բաց երիտասարդական կենտրոն ............................................................... 18

«Դարձի՛ր մենթոր» միջազգային դասընթաց ............ 20

«Connect the Dots» գործընկերության հաստատման ծրագիր ............................................................... 21

«Մեր աշխարհին առաջնորդող կանայք» աղջիկների առաջնորդության և հզորացման ծրագիր ................. 22

ԵՆԿ «Աղջիկների հեծանվավարության ծրագիր» .... 23

Կամավորների միջազգային օր-2018 ......................... 25

Եվրոպական կամավորական ծառայություն ............ 27

ԵԿԾ ուղարկում ........................................................... 28

ԵԿԾ հյուրընկալում ..................................................... 34

«French Civic Service» ուղարկում / հյուրընկալում .. 37

German Federal Volunteer Service Act ......................... 38

Խաղաղության Կորպուս .............................................. 39

«Դեպի Հայք» ............................................................... 40

«UPSHIFTՀայաստան» դեռահասների զարգացման և զորակցման ծրագիր»...............................................42

Ռազմավարական նպատակ 3 .................................... 44

Երիտասարդների միջազգային օր 2018 .................... 45

«Բաց երիտասարդական աշխատանք. Գյումրիում երիտասարդների հզորացում» ծրագիր ..................... 47

Կարողությունների զարգացման դասընթացներ՝ «Բաց երիտասարդական աշխատանք. Գյումրու երիտասարդների հզորացում» ծրագրի շրջանակներում ............................................................... 49

Հետազոտական դպրոց՝ «Բաց երիտասարդական աշխատանք. Գյումրու երիտասարդների հզորացում» ծրագրի շրջանակներում ............................................ 51

Ֆինանսական հաշվետվություն................................. 52

About us ............................................................... 4

We are 10 years old ................................................ 6

Strategis aim 1 ...................................................... 7

Erasmus+ Youth. Info Centre in Armenia ........................ 8

Mobility projects .................................................... 10

Beyond Borders: Turkey-Armenia Dialogue Programme ........................................................... 12

Armenia-Germany School Exchange Programme ........ 13

Hiking with YIC ....................................................... 14

Language clubs ....................................................... 15

Friday's Café .......................................................... 16

Strategic aim 2 ....................................................... 17

"Youth House" Open Youth Centre ............................. 18

"Be a Mentor" international training course ................ 20

"Connect the Dots" contact making event .................... 21

"Girls Leading Our World" (GLOW) girls leadership and empowerment project ........................................... 22

YIC "Girls Bicycle Project" .......................................... 23

International Volunteer Day - 2018 .............................. 25

European Voluntary Service ........................................ 27

EVS Sending ............................................................ 28

EVS Hosting ............................................................ 34

French Civic Service sending / hosting ........................ 37

German Federal Volunteer Service Act ......................... 38

PEACE CORPS ......................................................... 39

Birthright Armenia ..................................................... 40

"UPSHIFT Armenia" adolescent development and empowerment programme..........................................42

Strategic aim 3 ......................................................... 44

International Youth Day 2018 ..................................... 45

"Open Youth Work: Empowering Young People in Gyumri" project ............................................................. 47

Capacity Building Trainings: "Open Youth Work: Empowering Young People in Gyumri" project ............ 49

Research Schools: "Open Youth Work: Empowering Young People in Gyumri" project .................................. 51

Financial report ......................................................... 52

# ՄԵՐ ՄԱՍԻՆ
# ABOUT US

Գյումրու «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» հասարակական կազմակերպությունը հիմնվել է 2008թ. Գյումրի քաղաքում՝ երիտասարդական աշխատանքի ոլորտում փորձ և ճանաչում ունեցող մի խումբ ակտիվ երիտասարդների կողմից:

**ԵՆԿ տեսլականն է.** Նախաձեռնող, մրցունակ և բարեկեցիկ երիտասարդ:

**ԵՆԿ առաքելությունն է.** Նպաստել երիտասարդների կյանքի որակի բարձրացմանը՝երիտասարդակենտրոն մոտեցմամբ:

ԵՆԿ-ն առաջարկում է կազմակերպության մեջ ներգրավվելու երեք տարբեր մակարդակ՝ **անդամ, կամավոր և շահառու**:

**Անդամության հարցերը** կանոնակարգվում են համաձայն՝ անդամության կանոնակարգի: Անդամները կազմում են կազմակերպության ղեկավարումն իրականացնող գերագույն մարմինը՝ Ընդհանուր Ժողովը: Անդամներն անմիջականորեն ներգրավված են կազմակերպության առօրյա գործունեության մեջ՝ որպես նախաձեռնող-կազմակերպիչներ:

**Կամավորության հարցերը** կանոնակարգվում են համաձայն՝ կամավորության կանոնակարգի: Կամավորներն աջակցում են կազմակերպության կողմից իրականացվող տարբեր ծրագրերի կազմակերպչական աշխատանքներին:

Gyumri "Youth Initiative Centre" non-governmental organization was established in Gyumri in 2008 by a group of active young people experienced and well-known in the field of youth work.

**Our vision**. An initiative-taking, competitive, well-off young person.

**Our mission**. To contribute to the improvement of the quality of life of the youth through a youth-centred approach.

We offer three different levels of involvement with the **organization-member, volunteer, beneficiary**.

The **membership** is regulated by the Membership Charter. The members of the organization constitute the supreme governing body of the organization the General Assembly. The members are directly involved in he daily activities of the organization as initiator -organizers.

**Volunteering** is regulated by the Volunteering Charter. The volunteers support YIC in carrying out its activities.

## ՆԱԽԱՁԵՌՆՈՂ, ՄՐՑՈՒՆԱԿ ԵՎ ԲԱՐԵԿԵՑԻԿ ԵՐԻՏԱՍԱՐԴ

**Շահառուներ** համարվում են 13 տարին լրացած անձիք, ոչ-ֆորմալ երիտասարդական խմբերը, երիտասարդական աշխատողները, կրթական / ուսումնական հաստատությունները, երիտասարդական և երիտասարդների հետ աշխատող պետական, մասնավոր, հասարակական կազմակերպությունները, որոնք օգտվում են կազմակերպության կողմից առաջարկվող ծառայություններից:

**ԵՆԿ աշխատակազմը** բաղկացած է տեղական և միջազգային երիտասարդական ոլորտում ճանաչում և փորձ ունեցող հմուտ և նվիրյալ թիմի անդամներից:

**ԵՆԿ Միջազգային խորհուրդն** իրականացնում է կազմակերպության ռազմավարական կառավարումը: Խորհուրդը կազմված է միջազգային երիտասարդական աշխատանքի և կազմակերպական զարգացման ոլորտում փորձառություն ունեցող 5 անձանցից:

ԵՆԿ միջազգային խորհրդին կից գործում է նաև **Տեղական խորհրդատվական խորհուրդը**, որի անդամները բարձր որակավորում և ճանաչում ունեցող հայ մասնագետներ են, ովքեր աջակցում են կազմակերպության ռազմավարական ծրագրային բնագավառներում համագործակցության կառուցման և արտաքին ներկայացուցչության հարցերում:

**The beneficiaries** are youth aged 13 and above, non-formal youth groups, youth workers, educational institutions, state, private, and non-governmental organizations working with youth, who use the services offered by the organization.

**The staff** of YIC consists of professional and dedicated team members having recognition in local and international youth field.

**The International Board** of YIC carries out the strategic management of the organization. The Board consists of 5 people experienced in the field of international youth work and organizational development.

YIC also has a **Local Advisory Board** that consists of highly qualified and recognized Armenian professionals. They assist in strategic matters as well as in partnership building and external representation.

ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՀԵՏ

ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ

# ՄԵՆՔ 10 ՏԱՐԵԿԱՆ ԵՆՔ
# WE ARE 10 YEARS OLD

2018 թվականի դեկտեմբերին լրացավ Գյումրու «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» հասարակական կազմակերպության գործունեության 10 տարին:

Դեկտեմբերի 22-ին կայացավ կազմակերպության հիմնադրման 10-ամյակին նվիրված միջոցառումը: Միջոցառմանը ներկա էին պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, տեղական և միջազգային կազմակերպությունների ու մեդիա ոլորտի ներկայացուցիչներ, կազմակերպության անդամներ ու շահառուներ:

Միջոցառման ընթացքում Գյումրու «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» ՀԿ նախագահ Արթուր Նաջարյանն ամփոփեց կազմակերպության գործունեության 10 տարիները՝ ներկայացնելով կազմակերպության իրականացրած ծրագրերը և գործողությունները՝ ըստ ոլորտների: Տեղի ունեցավ նաև ԵՆԿ-ին նվիրված «Youth Power» երգի պրեմիերան, որի կատարողն է երգչուհի Արմինե Քոչարյանը:

Ամփոփելով 2018 թվականը՝ կազմակերպությունը հանձնեց ավանդական դարձած տիտղոսներն ու շնորհակալագրերը գործընկեր կառույցներին, պետական, ՏԻՄ, մեդիա և հասարակական ոլորտի ներկայացուցիչներին՝ կազմակերպության հետ սերտ համագործակցության և երիտասարդության ոլորտին վերաբերող հարցերում գործուն մասնակցության ու ցուցաբերած աջակցության համար: Հանձնվեցին նաև «Տարվա անդամ», «Տարվա աշխատակազմի անդամ» և «ԵՆԿ բարեկամ» տիտղոսները:

ԵՆԿ հիմնադրման հոբելյանական 10-ամյակի և երիտասարդական ոլորտի զարգացման գործում ունեցած մեծ ավանդի համար կազմակերպությունը՝ ի դեմս նախագահ Արթուր Նաջարյանի, պարգևատրվեց պատվոգրերով, շնորհակալագրերով և հուշանվերներով ՀՀ Սպորտի և երիտասարդության հարցերի նախարարի պաշտոնակատար Գաբրիել Ղազարյանի, Շիրակի մարզպետ Կարեն Սարուխանյանի և Գյումրու համայնքապետ Սամվել Բալասանյանի անունից:

In December 2018, Gyumri “Youth Initiative Centre” celebrated the 10th anniversary of its operation.

The event was attended by state governmental bodies, representatives of local and international organizations, media representatives and members and beneficiaries of the organization.

During the event Gyumri “Youth Initiative Centre” NGO president Artur Najaryan summarize ten years of projects that have been implemented according to the directions of the organization. Also the premiere of the song "Youth Power" dedicated to YIC took place. The song is performed by singer Armine Kocharyan.

Summing up 2018, Gyumri “Youth Initiative Centre” NGO awarded partner organizations, representatives of state, media and public sector with traditional titles and certificates of appreciation for close cooperation with the organization and for their active participation and support in the youth field. Also the titles "Member of the Year", "Staff Member of the Year" and "Friend of YIC" were awarded.

For the 10th anniversary of YIC, as well as for the big contribution in the development of youth field, the organization, and president Artur Najaryan was awarded with certificates of appreciation and souvenirs by the acting Minister of the Ministry of Sport and Youth Affairs of RA Gabriel Ghazaryan, Shirak governor Karen Sarukhanyan and Gyumri mayor Samvel Balasanyan.






# ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿ 1

# STRATEGIC AIM 1

Աջակցել երիտասարդների սոցիալ-տնտեսական վիճակի բարելավմանը

To contribute to the improvement of the socio-economic conditions of the youth

## 1.1

Ներգրավել երիտասարդներին շարունակական ոչ ֆորմալ կրթական գործընթացներում

To engage young people in continuous non-formal learning processes

## 1.2

Զարգացնել առողջ ապրելակերպի մշակույթը երիտասարդության շրջանում

To develop a healthy lifestyle culture among the young people

## 1.3

Մեծացնել երիտասարդության մասնակցությունը մշակութային կյանքում

To increase youth participation in cultural life

## 1.4

Բարձրացնել երիտասարդների մրցունակությունը աշխատաշուկայում

To raise the competitiveness of the young people in the labour market

# ERASMUS+ YOUTH. ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ
# ERASMUS+ YOUTH. INFO CENTRE IN AREMNIA
# 2018

## ՖԵՅՍԲՈՒՔՅԱՆ ԷՋԻ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ
## FACEBOOK STATISTIC

7019 հավանում
likes

6052 տեսանելիություն
reaches

7068 հետևորդ
followers

## ՖԵՅՍԲՈՒՔՅԱՆ ԷՋՆ ՈՒՆԻ
## FACEBOOK PAGE HAS

125 գրառում
posts

29 մեդիա անդրադարձ
media coverage

263 լուսանկար
photos

6 տեսանյութ
videos

## ՖԵՅՍԲՈՒՔՅԱՆ ԷՋԻ ՀԵՏԵՎՈՐԴՆԵՐ
## FACEBOOK PAGE FOLLOWERS

19%

81%

AGE

52 % - 18-24 տարեկան

33 % - 25-34 տարեկան

## ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ
## EVENTS AND ACTIVITIES

20

ՀՀ 6 քաղաքներում
6 cities of RA

## ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ
## CONSULTANCIES

350

**Երբ**. Հուլիս, 2017 – դեկտեմբեր, 2018

**Որտեղ**. Գյումրի, Հայաստան

**Նպատակ**. Տրամադրել տեղեկատվություն և խորհրդատվություն երիտասարդներին, երիտասարդական կառույցներին և բոլոր այլ շահագրգիռ կողմերին՝ Հայաստանում Եվրամիության «Էրազմուս+» ծրագրի ընձեռած հնարավորությունների վերաբերյալ:

**Նկարագրություն**. Erasmus+ Youth. Տեղեկատվական կենտրոնների ցանցը ստեղծվել է 2017 թ., որը գործում է Արևելյան գործընկերության 6 երկրներում (Հայաստան, Վրաստան, Ադրբեջան, Ուկրաինա, Մոլդովա, Բելառուս) և Ռուսաստանում:

Հայաստանում Erasmus+ Youth. Տեղեկատվական կենտրոնի գործունեության համակարգման լիազորությունը հանձնվել է Գյումրու «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» ՀԿ-ին:

Տեղեկատվական կենտրոնի թիրախային խմբերն են երիտասարդները, երիտասարդական կազմակերպությունները, երիտասարդական աշխատողները, երիտասարդական քաղաքականություն իրականացնողները և այլ ինստիտուցիոնալ, շահագրգիռ կողմերը:

Տեղեկատվական կենտրոնը տրամադրում է առցանց և հեռախոսային խորհրդատվություն, ինչպես նաև կազմակերպում է առերես հանդիպումներ և բաց դռների օրեր:

**Ծրագրի բյուջեն**. 3,000 եվրո

**When**. July, 2017 – December, 2018

**Where**: Gyumri, Armenia

**Aim**. To provide information on opportunities for young people and youth organisations within the Erasmus+ programme and support stakeholders in the implementation of their projects.

**Description**. Erasmus+ Youth. Network of Info Centres has been established in 2017. The Info Centres are functioning in six Eastern Partnership countries (Armenia, Georgia, Azerbaijan, Ukraine, Moldova, Belarus) and Russia. The coordination of activities of the Info Centres is carried out by a single organization selected from each partner country on the basis of the open call. Gyumri "Youth Initiative Centre" (YIC) NGO is in charge of coordination of activities of the Erasmus+ Youth. Info Centre in Armenia.

The target groups of the Info Centre are young people, youth organizations, youth workers, youth policy makers and other institutional stakeholders.

Info Centre provides online and phone consultancy, as well as organizes face to face meetings and open doors.

**The budget**: 3,000 EUR








# ՇԱՐԺՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐ
# MOBILITY PROJECTS

**18**
ԾՐԱԳԻՐ
PROJECTS

## ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԹԻՎ
## TOTAL NUMBER OF PARTICIPANTS

**119**

| ՀԱՅԱՍՏԱՆԻՑ ՈՒՂԱՐԿՎԱԾ<br>SENT FROM ARMENIA | ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՀՅՈՒՐԸՆԿԱԼԱԾ<br>HOSTED IN ARMENIA |
|---|---|
| 63 | 56 |

## ԾՐԱԳՐԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ
## TYPES OF THE PROJECTS

| | | | |
|---|---|---|---|
| ՍԵՄԻՆԱՐ<br>SEMINAR | 1 | ՖՈՐՈՒՄ<br>FORUM | 1 |
| ԴԱՍԸՆԹԱՑ<br>TRAINING COURSE | 10 | ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԱՅՑ<br>STUDY VISIT | 1 |
| ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ԾՐԱԳԻՐ<br>YOUTH EXCHANGE | 4 | ԴՊՐՈՑՆԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ԾՐԱԳԻՐ<br>SCHOOLS EXCHANGE PROGRAMME | 1 |

ՀՈՒՆԳԱՐԻԱ, ԼԵՀԱՍՏԱՆ, ԼՅՈՒՔՍԵՄԲՈՒՐԳ, ԼԻՏՎԱ, ՎՐԱՍՏԱՆ, ԻՍՊԱՆԻԱ, ՏԱՋԻԿՍՏԱՆ, ԽՈՐՎԱԹԻԱ, ԳԵՐՄԱՆԻԱ, ՄՈԼԴՈՎԱ, ՖԻՆԼԱՆԴԻԱ, ԻՏԱԼԻԱ, ՍԼՈՎԱԿԻԱ

HUNGARIA, POLAND, LUXEMBOURG, LITHUANIA, GEORGIA, SPAIN, TAJIKISTAN, CROATIA, GERMANY, MOLDOVA, FINLANDIA, ITALIA, SLOVAKIA

# ԱՐՇԱՎ ԵՆԿ-Ի ՀԵՏ

# HIKING WITH YIC

Մշտապես կարևորելով երիտասարդների ակտիվ ներգրավվածությունը տարբեր ժամանցային միջոցառումներում և նպատակ ունենալով բացահայտել Հայաստանի պատմամշակութային և տեսարժան վայրերը, Գյումրու «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» ՀԿ-ն պարբերաբար կազմակերպում է ճանաչողական արշավներ:

2018 թվականների ընթացքում ԵՆԿ-ն նախա-ձեռնել է 2 արշավ Հայաստանի մի քանի պատմամշակութային վայրեր, որոնց մասնակցել է շուրջ 55 հոգի:

Gyumri “Youth Initiative Centre” NGO regularly organizes cognitive hikings in order to attach importance to the active involvement of youth in various entertainment events as well as discover Armenia and its historical attractions, .

During 2018, YIC organized 2 tours to Armenian historical and cultural places, participated by 55 people.



**Երբ**. Հունվար-դեկտեմբեր, 2018

**Որտեղ**. Հայաստան, Վրաստան, Եվրոպական և ԱՊՀ երկրներ

**Մասնակիցների ընդհանուր թիվ**. 63 մասնակից (Հայաստանից դուրս ծրագրեր) +12 մասնակից (Հայաստանում իրականացված ծրագրեր)

**Նկարագրություն**. 2018 թվականի ընթացքում Գյումրու «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» ՀԿ-ն, շարունակելով համագործակցությունը միջազգային գործընկերների հետ, Եվրամիության «Էրազմուս+» և այլ ծրագրերի շրջանակներում հյուրընկալել է երեք միջազգային շարժունակության ծրագիր Հայաստանում, որոնց մասնակցել է Հայաստանից 12 և արտերկրից 44 երիտասարդ և երիտասարդական աշխատող:

Ակտիվ համագործակցության արդյունքում ԵՆԿ-ն մաս է դարձել հարևան երկրներում և Եվրոպայում իրականացված 18 ծրագրի, որոնց մասնակցել են Հայաստանից 63 երիտասարդ, երիտասարդական աշխատող, հասարակական և քաղաքացիական ոլորտի ներկայացուցիչներ, ուսանողներ, ուսուցիչներ և այլ մասնագիտությունների տեր անձիք:

Ծրագրերը եղել են արվեստի և մշակույթի, ներառական կրթության, երիտասարդական աշխատանքի, երիտասարդական քաղաքականության, ֆորմալ և ոչ-ֆորմալ կրթության կազմակերպման, առաջնորդության, աշխատունակության ու ձեռներեցության, բնապահպանության, խաղաղաշինության, սոցիալական ակտիվիզմի և այլ թեմաներով:



**When**: January-December, 2018

**Where**: Armenia, Georgia, European and CIS countries

**Total Number of Participants**: 63 participants (projects out of Armenia) + 12 participants (projects in Armenia)

**Description**: In 2018, YIC continued cooperation with international partners, hosted 3 mobility projects in Armenia giving a chance to 12 youngsters and 44 youth workers respectively from Armenia and abroad to participate in the projects implemented within the frame of the Erasmus+ and other programmes.

In addition, YIC partnered in 18 international mobility projects hosted in the neighbouring countries and Europe with a participation of 63 young people, youth workers, NGO and civil society representatives, students, teachers and people with different backgrounds and specializations from Armenia.

The projects were on the topics of art and culture, social inclusion, youth policy, formal and non-formal education, employability and entrepreneurship, leadership, peace-building, social activism and so on.





# ԼԵԶՎԻ ԱԿՈՒՄԲՆԵՐ

# LANGUAGE CLUBS

Գյումրու «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» ՀԿ-ի գործունեության ուղղություններից է՝ նպաստել երիտասարդների լեզվական և հաղորդակցման հմտությունների զարգացմանը՝ երիտասարդների համար լեզվի ակումբների կազմակերպման միջոցով:

2018 թվականի ընթացքում Գյումրու «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» ՀԿ-ում գործել են անգլերենի, ֆրանսերենի և գերմաներենի սկսնակ և միջին մակարդակի ակումբները, որոնց մասնակցել է 160-ից ավելի երիտասարդ:

Ակումբները ղեկավարել են ոլորտի երիտասարդ մասնագետներ: Ակումբների բոլոր մասնակիցները դասընթացի ավարտից հետո ստացել են հավաստագրեր:

One of Gyumri "Youth Initiative Centre" NGO’s goals is to contribute to the development of youth's language and communication skills by organizing language clubs.

During 2018, YIC started English, German and French language clubs for beginners and intermediate level learners.

More than 160 young people have attended the clubs. Club leaders have been young people skilled in their fields. At the end of the clubs all participants receive certificates.







## «ՍԱՀՄԱՆՆԵՐԻՑ ՎԵՐ». ՀԱՅԱՍՏԱՆ-ԹՈՒՐՔԻԱ ԵՐԿԽՈՍՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ

## BEYOND BORDERS: TURKEY-ARMENIA DIALOGUE PROGRAMME

**Երբ**. Հունվար-դեկտեմբեր, 2018

**Որտեղ**. Հայաստան և Թուրքիա

**Մասնակիցների ընդհանուր թիվ**. 106 ճանապարհորդական դրամաշնորհառու, երկխոսության ծրագրի 24 մասնակից, փորձի փոխանակման նախագծի 3 մասնակից

**Նկարագրություն**. Հրանտ Դինք հիմնադրամը, համագործակցելով Գյումրու «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» ՀԿ-ի հետ, շարունակում է խրախուսել փակ սահմաններից այն կողմ երկու հարևան երկրների մարդկանց և հաստատությունների միջև կապերի հաստատումն ու ոլորտային գիտելիքների փոխանակումը «Սահմաններից վեր» ծրագրի միջոցով:

Այդ նպատակին են ծառայում ծրագրի ներքո իրականացվող Հայաստան-Թուրքիա ճանապարհորդական դրամաշնորհը, որը 2018թ. աջակցել է երկու երկրներից 106 անձանց՝ միջսահմանային այցեր կատարելու հարևան երկիր՝ իրենց ծրագրերը կյանքի կոչելու նպատակով, Հայաստան-Թուրքիա փորձի փոխանակման նախագիծը, որը հնարավորություն է ընձեռել 3 անհատների մասնագիտական փորձառությունն անցկացնել հարևան երկրի որևէ կազմակերպությունում 4-8 ամիս տևողությամբ, և վերջինը՝ Հայաստան-Թուրքիա երկխոսության ծրագրերը, որոնց արդյունքում իրականացվել է երեք խմբային այցելություն Հայաստանից Թուրքիա և հակառակը ճարտարապետության, կրթության, առողջապահության և բժշկության ոլորտներում՝ ներգրավելով 24 մասնակցի:

2017-2019 թվականներին «Սահմաններից վեր» ծրագիրն իրականացվում է Միացյալ Թագավորության կառավարության Հակամարտությունների, կայունության և անվտանգության հիմնադրամի աջակցության շնորհիվ:

**When**: January-December, 2018

**Where**: Armenia and Turkey

**Total Number of Participants**: 106 travel grantees, 24 Dialogue Programme participants and 3 fellows

**Description**: Hrant Dink Foundation, in partnership with Gyumri Youth Initiative Centre, continues to increase direct contacts and to promote cooperation between the peoples of the two neighbouring countries through Beyond Borders programme. This purpose is served with the help of the Turkey-Armenia Travel Grant which supported 106 individuals from both countries in 2018 to visit the neighbouring country for a specific purpose by covering the round-trip transportation costs. The Turkey-Armenia Fellowship Scheme has supported 3 individuals from both countries to implement a professional fellowship in a host organization in Armenia or Turkey with the duration of 4 to 8 months.

In the frames of Turkey-Armenia Dialogue Programme series there were implemented 3 group visits from Armenia to Turkey and vice versa in fields such as architecture, education, healthcare and medicine with the participation of 24 participants in total. In 2017-2019, the Beyond Borders programme was implemented with the support of the UK Government's Conflict, Stability and Security Fund.





# «ՀԱՅԱՍՏԱՆ-ԳԵՐՄԱՆԻԱ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ԾՐԱԳԻՐ»

# “ARMENIA-GERMANY SCHOOL EXCHANGE PROGRAMME”

**Երբ**. Սեպտեմբեր 14-21, 2018

**Որտեղ**. Գյումրի, Հայաստան

**Նպատակ**. Նպաստել Հայաստանի և Գերմանիայի դպրոցների միջև գործընկերության հաստատմանը, դպրոցների աշակերտների և ուսուցիչների փորձի փոխանակմանը:

**Նկարագրություն**. Գյումրու «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» ՀԿ-ն Գերմանական տնտեսական համագործակցության նախարարության «ENSA» ծրագրի շրջանակներում սեպտեմբերի 14-ից 21-ը Հայաստանում հյուրընկալեց Բեռլինի ամենամեծ՝ Կարլ Ֆոն Լիննե հատուկ դպրոցի 7 հոգանոց պատվիրակությանը:

Գյումրիից ծրագրում ներգրավված էին Շիրակի պետական համալսարանի ավագ դպրոցի և Գյումրու «Ֆոտոն վարժարան» ՊՈԱԿ-Ի աշակերտներն ու ուսուցիչները:

Ծրագրի շրջանակներում Գերմանիայի պատվիրակությունը շրջայց կատարեց ուսումնական հաստատություններ, կրթության զարգացման կենտրոններ, ինչպես նաև Հայաստանի բազմաթիվ տեսարժան և պատմամշակութային վայրեր: Մարզպետարան կատարած այցի ժամանակ պատվիրակությունը հանդիպեց Շիրակի մարզպետի տեղակալ Սոֆյա Հովսեփյանի հետ, ով ներկայացրեց ՀՀ-ում ներառական կրթության առանձնահատկությունները, առկա ծրագրերն ու այս ոլորտի հիմնահարցերը: Հավելենք, որ ծրագրի առաջին փուլի ընթացքում հունիս ամսին հայկական պատվիրակությունը աս աշխատանքային և ճանաչողական այցով մեկնել էր Բեռլին:

**Ծրագրի բյուջեն**. 2, 773 եվրո

**When**: September 14-21, 2018

**Where**: Gyumri, Armenia

**Aim**: To foster school partnership between Armenian and German schools and provide space for experience exchange between the students and the teachers.

**Description**: Gyumri “Youth Initiative Centre” NGO within the framework of the German Economic Cooperation and ENSA program hosted a seven-member delegation in Armenia from Berlin’s largest school - Carl Von Linne special school from the 14th to the 21st of September, 2018.
From Gyumri, the students and teachers of Shirak State University High School and Gyumri Photon College SNCO were involved in the programme.

Within the framework of the programme, the German delegation had study visits to educational institutions, education development centers, as well as numerous historical and cultural places of Armenia. During the visit to the Regional Government of Shirak, the delegation had a meeting with the deputy governor of Shirak Marz Sofia Hovsepyan, during which the peculiarities of inclusive education in Armenia, existing programs and key issues in this area were presented.
In addition during the first stage of the programme, the Armenian delegation visited Berlin for a job shadowing and a cognitive meeting in June.

**The budget**. 2, 773 EUR





# «ՈՒՐԲԱԹՕՐՅԱ ՍՐՃԱՐԱՆ»

# “FRIDAY’S CAFÉ”

«Ուրբաթօրյա սրճարանը» Գյումրու «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» ՀԿ տեղական ծրագրերից է, որը նախաձեռնվել է կազմակերպության «Եվրոպական կամավորական ծառայության» (ԵԿԾ) կամավորների կողմից և իրականացվում է 2013 թվականից:

«Ուրբաթօրյա սրճարանի» շրջանակներում ընտրվում են թեմաներ՝ երաժշտություն, պոեզիա, նկարչություն, թատրոն, խաղեր և այլն, որոնց էլ նվիրվում է սրճարանը:

Միջոցառման ժամանակ ԵՆԿ գրասենյակը վերածվում է «սրճարանի», որտեղ և անցկացվում է «Ուրբաթօրյա սրճարանը»: Միջոցառման անբաժան մասն է կազմում կազմակերպության միջազգային կամավորների կողմից պատրաստված կերակրատեսակների հյուրասիրությունը:

2018 թվականին անցկացվել է 3 «Ուրբաթօրյա սրճարան»՝ տարբեր թեմաներով, որոնց մասնակցել է շուրջ 130 երիտասարդ:









"Friday's Cafe" is one of the local activities of Gyumri “Youth Initiative Centre” initiated by YIC EVS volunteers.

“Friday's Cafe” takes place twice a month during which special topics are chosen: music, poetry, painting, theatre, games and etc. The YIC office is changed into a Cafe where the "Friday's Cafe" takes place. The food is served by international volunteers of the organization which are the hallmark of the “Friday's Café”.

During 2018, 3 “Friday's Cafes” were held on different topics and more than 130 young people attended the events.

# ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿ 2

# STRATEGIC AIM 2

Խթանել երիտասարդների նախաձեռնողականությունը

To promote youth initativeness

## 2.1

Մեծացնել երիտասարդների դերը հասարակական հիմնախնդիրների լուծման գործում

To increase the role of young people in solving social issues

## 2.2

Աջակցել երիտասարդների նորարար գաղափարների իրականացմանը

To support the implementation of innovative ideas by young people

## 2.3

Աջակցել երիտասարդների ձեռներեցությանը

To support youth entrepreneurship

## 2.4

Զարգացնել կամավորության մշակույթը երիտասարդության շրջանում

To develop a volunteering culture among young people

# «ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՏՈՒՆ» ԲԱՑ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

# “YOUTH HOUSE” OPEN YOUTH CENTRE

Երբ. Մայիս - դեկտեմբեր, 2018

Որտեղ. Գյումրի, Հայաստան

Խնդիր. Հիմնված երիտասարդական կենտրոնի միջոցով բազմապրոֆիլ անվճար ծառայությունները հասանելի դարձնել Գյումրիում մարգինալացված երիտասարդների համար:

Նկարագրություն. 2018 թվականի մայիսին «Բաց երիտասարդական աշխատանք. Գյումրիում երիտասարդների հզորացում» ծրագրի շրջանակներում ԵՆԿ-ն գործարկեց Հայաստանում առաջին բաց երիտասարդական կենտրոնը՝ Գյումրու «Երիտասարդների տունը»:

Գործունեության առաջին 8 ամիսների ընթացքում, որոնցից 5-ը՝ դրամաշնորհային ծրագրի ընթացքում, իսկ 3-ը՝ դրա ավարտից հետո, ծառայել է ավելի քան 300 անհատ-շահառուի (unique beneficiary): Օրական ծառայություններ են մատուցվել միջինը 30-35 երիտասարդի: Կենտրոնը՝ 95 քմ ընդհանուր մակերեսով տարածք է, որը գտնվում է Գյումրու առավել խոցելի թաղամասերից մեկում: Ունի բակ, որտեղ ևս կիրառվում են բաց երիտասարդական աշխատանքի արտակենտրոնային միջոցառումներ:

«Երիտասարդների տուն» բաց երիտասարդական կենտրոնը 13-ից 18 տարեկան երիտասարդներին առաջարկում է ծառայությունների լայն շրջանակ՝ ներառյալ կյանքի հմտությունների և աշխատանքային մրցունակության կարողունակությունների ուսուցում, անհատական կամ խմբային խորհրդատվություն և ոչ-ֆորմալ կրթություն:





When: May - December, 2018

Where: Gyumri, Armenia

Objective: To provide multifunctional free services for marginalized youth in Gyumri.

Description: In May 2018, within the frame of the “Open Youth Work: Empowering Young People in Gyumri” project Gyumri “Youth Initiative Centre” NGO opened the first open youth centre in Armenia - the “Youth House”, with the support of the European Union and Gyumri Municipality, in cooperation with the Caucasus Research Resource Center-Armenia Foundation.

During the first eight months of its existence, five of which were during the grant, and three after the grant, the already existing open youth centre has served more than 300 unique beneficiaries and provided daily services to an average of 30-35 young people. The Youth House is located in an area of about 95 square meters in one of the most vulnerable neighbourhoods of Gyumri.

Այս ամենը միտված է բարձրացնելու երիտասարդների ինքնագնահատականը, լինել ավելի վստահ սեփական ուժերին և կարողություններին՝ մեծացնելով ապագայում աշխատանք գտնելու հնարավորությունները:

Կենտրոնի ամենօրյա գործունեությունը ներառել է հետևյալ գործողությունները.

- կրթական և ժամանցային միջոցառումներ,

- օտար լեզուների, համակարգչային գրագիտության և այլ ակումբներ,

- ոչ-ֆորմալ կրթական միանգամյա միջոցառումներ ու երկարաժամկետ ծրագրեր,

- սպորտի և առողջ ապրելակերպի միտված ծրագրեր,

- համայնքային միջոցառումների մասնակցություն,

- կենտրոնից դուրս իրականացվող ամենօրյա գործողություններ,

- մենթորինգի և հասակակիցների աջակցման ծրագրերի իրականացում:

Կենտրոնը նաև ապահով և հյուրընկալ տարածք է երիտասարդների առօրյայի ինքնակազմակերպման, ինքնարտահայտման և կյանքի հմտություններ ստանալու համար: Այն հարթակ է նոր ընկերներ ձեռք բերելու, մտահորիզոնն ընդլայնելու համար:

Կենտրոնի տարածքը, երիտասարդական աշխատանքի իրականացման ժամերից դուրս, ծառայել է նաև որպես ռեսուրսային կենտրոն, հանդիպումների վայր և միջոցառումների կազմակերպման հարթակ այլ ՔՀԿ-ների համար, որոնց գործունեությունն առնչվում է երիտասարդության հարցերին ու երիտասարդական աշխատանքին:

The centre offers young people age 13 to 18 in Gyumri a wide range of services, including competence building for life, competitiveness in the job market, individual or group counselling, non-formal and informal education, which helps young people to enhance their self-esteem, achieve more control over their lives, and improve their chances for gaining employment in the future.

Daily operation of the centre:

- Educational and entertainment activities;

- Foreign languages, computer literacy and other clubs;

-One-time and long-term non-formal educational activities;

- Sport and healthy lifestyle promoting activities;

- Community projects;

- Daily outreach activities;

- A set-up mentoring and peer-support programme.

It is also a safe space for expressing yourself, spending leisure time, meeting and communicating with peers.

Beyond open youth work hours, the centre also served as a resource centre, meeting place and event organizing platform for other CSOs whose activities relate to youth issues and youth work. It has served as a platform for thematic discussions, seminars, trainings and collaboration among civil society organizations, schools, childcare centres, social services, police, municipality and other institutions, that support the provision of a wide range of accessible and quality services for young people.





# «ԴԱՐՁԻ՛Ր ՄԵՆԹՈՐ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԴԱՍԸՆԹԱՑ

# “BE A MENTOR” INTERNATIONAL TRAINING COURSE

**Երբ**. Ապրիլ 1-8, 2018

**Որտեղ**. Գյումրի, Հայաստան

**Նպատակ**. Աջակցել Եվրոպական կամավորական ծառայության ծրագրերում ներգրավված մենթորների գիտելիքների բարելավմանը՝ նպաստելով ԵԿԾ համակարգողների և մենթորների ներուժի զարգացմանը և ԵԿԾ ծրագրերի որակի բարձրացմանը, ինչպես նաև մենթորներին «զինելու» ԵԿԾ կամավորներին աջակցելու և ուղղորդելու համար անհրաժեշտ կարևոր մեթոդներով, որոնք կօգնեն վերջիններիս լինել ավելի աշխատունակ:

**Նկարագրություն**. Գյումրու «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» ՀԿ-ն Նորվեգիայի «Bremanger commune» կազմակերպության հետ համատեղ ապրիլի 1-8-ը Եվրամիության «Էրազմուս+» ծրագրի շրջանակներում Հայաստանում հյուրընկալեց մենթորության թեմայով յոթօրյա միջազգային դասընթաց:

Ծրագրի ընթացքում համախմբվեցին ԵԿԾ ծրագրերի համակարգողներ, մենթորներ և նախկին ԵԿԾ կամավորներ, ովքեր ներկայացրին Եվրոպական կամավորական ծառայության ծրագրերի իրականացման իրենց փորձը և ազգային առանձնահատկությունները:

Ծրագրի մասնակիցներն ուսումնական այցով եղան նաև ԵՆԿ գրասենյակում և «ԿԱՍԱ» շվեյցարական մարդասիրական հիմնադրամում, որի միջոցով հնարավորություն ունեցան բացահայտելու կազմակերպություններում առկա ԵԿԾ մենթորական համակարգերը, կիսվելու հաջողված փորձերով և հաստատելու համագործակցություն:
Արդյունքում դասընթացի մասնակիցները ձեռք բերեցին գիտելիքներ, ծանոթացան ԵԿԾ կամավորների հետ արդյունավետ կերպով աշխատելու և ԵԿԾ ծրագրեր իրականացնելու համար անհրաժեշտ նոր գործիքների և մեթոդների:

Դասընթացը համախմբել էր 28 երիտասարդի՝ Հայաստանից, Նորվեգիայից, Հունաստանից, Լեհաստանից, Ռումինիայից, Ռուսաստանի Դաշնությունից, Մոլդովայից, Էստոնիայից, Իտալիայից, Վրաստանից և Ուկրաինայից:

**Ծրագրի բյուջեն**. 16, 498 եվրո





**When**: April 1-8, 2018

**Where**: Gyumri, Armenia

**Aim**: To empower EVS mentors to increase the quality of EVS projects through developing capacities of EVS coordinators and mentors by equipping them with vital methods and tools to support and guide the volunteers towards the development of competences for future employment.

**Description**: Gyumri “Youth Initiative Centre” NGO in cooperation with "Bremanger commune" (Norway) hosted a 7-day international training course in Armenia on EVS mentorship in the framework of “Erasmus+” programme from the 1st to the 8th of April, 2018.
The project brought together EVS coordinators, mentors and ex-EVS volunteers, who presented their expertise in the implementation of European Voluntary Service projects and national features.

The participants of the training course also had an opportunity to have a study visit to the YIC office and “KASA” Swiss Humanitarian Foundation to get a closer look on EVS Mentoring system in the organization, to share good practices and to set up partnership.

To conclude, the participants of the training course gained knowledge and acquired instrumental tools and methods to work productively with EVS Volunteers and manage European Voluntary Service projects.

The training course brought together 28 representatives from Armenia, Norway, Greece, Poland, Romania, the Russian Federation, Moldova, Estonia, Italy, Georgia and Ukraine.

**The budget**: 16, 498 EUR

# «CONNECT THE DOTS» ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՄԱՆ ԾՐԱԳԻՐ

# “CONNECT THE DOTS” CONTACT MAKING EVENT

**Երբ**. Մայիս 10-18, 2018

**Որտեղ**. Գյումրի, Հայաստան

**Նպատակ**. Խթանել համագործակցությունը Եվրոպական կամավորական ծառայության ծրագրերում ներգրավված կազմակերպությունների ներկայացուցիչների միջև՝ նպաստելով համայնքային կամավորական ծրագրերի որակի բարձրացմանը և նորարարության ներմուծմանը փորձի փոխանակման միջոցով:

**Նկարագրություն**. Գյումրու «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» ՀԿ-ն Գերմանիայի «Kultur Aktiv» կազմակերպության հետ համատեղ մայիսի 10-18-ը Եվրամիության «Էրազմուս+» ծրագրի շրջանակներում Հայաստանում հյուրընկալեց ԵԿԾ թեմայով գործընկերության հաստատման ծրագիրը:
Ծրագրի ընթացքում համախմբվեցին ԵԿԾ կամավորների մենթորներ, ԵԿԾ համակարգողներ և երիտասարդական աշխատանքի փորձ ունեցող մարդիկ, ովքեր ներկայացրին իրենց փորձը և ազգային առանձնահատկությունները:

Ծրագրի մասնակիցներն ուսումնական այցով եղան Գյումրիում և Երևանում գործող կազմակերպություններում, որոնց միջոցով հնարավորու-թյուն ունեցան ծանոթանալու կազմակերպությունների փորձին և հաստատելու համագործակցություն:

Արդյունքում՝ ծրագրի մասնակիցները ծանոթացան տարբեր կազմակերպությունների ներկայացուցիչների և «Էրազմուս+» ծրագրերում վերջիններիս ունեցած փորձի հետ:

Ծրագիրը համախմբել էր Հայաստանից, Գերմանիայից, Էստոնիայից, Չեխիայից, Լեհաստանից, Վրաստանից, Նիդեռլանդներից, Մոլդովայից, Ռուսաստանի Դաշնությունից, Իտալիայից, Իսպանիայից և Բելառուսից ժամանած Եվրոպական կամավորական ծառայության ծրագրերում ներգրավված կազմակերպությունների 30 ներկայացուցչի:

**Ծրագրի բյուջեն**. 18,809 եվրո

**When**: May 10-18, 2018

**Where**: Gyumri, Armenia

**Aim**: To foster cooperation between representatives of EVS organizations aimed at increasing quality and innovation in EVS through the exchange of good practices.

**Description**: Gyumri “Youth Initiative Centre” NGO in cooperation with "Kultur Aktiv" (Germany) hosted a contact making event in Armenia on EVS in the framework of “Erasmus+” programme from the 10th to the 18th of May, 2018.
The project brought together EVS support people, EVS coordinators, EVS Mentors/Tutors with experience in youth work, who presented their expertise in the implementation of European Voluntary Service projects and national features.

The participants of the project also had an opportunity to have study visits to Gyumri and Yerevan organizations to share good practices and set up partnership.
To conclude, the participants of the project met with the representatives of different organizations and learned about their expertise in Erasmus+ projects' implementation.

The project brought together 30 representatives from Armenia, Germany, Estonia, Czech Republic, Poland, Georgia, The Netherlands, Moldova, Russian Federation, Italy, Spain and Belarus.

**The budget**: 18,809 EUR







## «ՄԵՐ ԱՇԽԱՐՀՆ ԱՌԱՋՆՈՐԴՈՂ ԿԱՆԱՅՔ» ԱՂՋԻԿՆԵՐԻ ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԶՈՐԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

## "GIRLS LEADING OUR WORLD" (GLOW) GIRLS LEADERSHIP AND EMPOWERMENT PROJECT

**Երբ**. Մայիս-նոյեմբեր, 2018

**Որտեղ**. Գյումրի, Կապան, Գավառ, գյուղ Թորոսգյուղ և այլ համայնքներ, Հայաստան

**Մասնակիցների ընդհանուր թիվ**. 336

**Նկարագրություն**. «Մեր աշխարհին առաջնորդող կանայք» (GLOW) աղջիկների առաջնորդության և հզորացման ծրագիրը, որն իրականացվել է Գյումրու «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» ՀԿ-ի և Խաղաղության կորպուսի կամավորների կողմից՝ ԱՄՆ դեսպանատան ֆինանսական աջակցության շնորհիվ, նպատակ ունի կրթության միջոցով խթանել երիտասարդ աղջիկների շրջանում առաջնորդությունը, ընկերասիրությունը, քաղաքացիական ակտիվությունը, գենդերային հավասարությունն ու իրավագիտակցությունը, ներշնչել ինքնավստահություն և հաղորդել համապատասխան գիտելիքներ՝ իրենց համայնքների խնդիրներից բխող ծրագրեր իրականացնելու համար:

2018 թվականի ամռանը իրականացվել է երեք ցերեկային ճամբար Գյումրիում, Կապանում և Գավառում՝ Հայկական Կարիտասի Գավառի «Փոքրիկ Իշխան» կենտրոնի և Գյումրիում «ԿԱՍԱ» շվեյցարական մարդասիրական հիմնադրամի հետ համագործակցությամբ ու աջակցությամբ, և ևս մեկ գիշերակացով ճամբար՝ Շիրակի մարզի Թորոս գյուղում:

Ճամբարներին մասնակցել են ընդհանուր 186 ճամբարական ու ջոկատավար, ովքեր ստացած գիտելիքներն ու հմտություններն օգտագործել են համայնքային ծրագրեր իրականացնելու գործում՝ ընգրկելով տարբեր համայնքների շուրջ 150 երիտասարդների:

**When**: May-November, 2018

**Where**: Gyumri, Kapan, Gavar, village Torosgyugh and other communities of Armenia

**Total Number of Participants**: 336

**Description**: "Girls Leading Our World" (GLOW) which is a joint project of Gyumri "Youth Initiative Centre" and the U.S. Peace Corps Volunteers with the financial support of the U.S. Embassy Armenia, is a girls' leadership and empowerment project that promotes leadership, friendship, civic engagement, gender equality and rights awareness in young Armenian women through targeted curriculum and participant-led community project implementation.

In summer 2018 three day camps and one overnight camp were implemented in the communities of Gyumri, Kapan, Gavar and village Torosgyugh in Shirak region in close cooperation and with the support of the local partners Armenian Caritas "Little Prince" Center in Gavar and the KASA Foundation Gyumri.

There were 186 campers and counselors who participated in GLOW and around 150 young people from different regions who joined the follow-up initiatives of GLOW campers who used the gained knowledge and skills to implement small community projects.






## ԵՆԿ «ԱՂՋԻԿՆԵՐԻ ՀԵԾԱՆՎԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ»

## YIC "GIRLS BICYCLE PROJECT"

**Երբ**. Մայիս - սեպտեմբեր 30, 2018

**Որտեղ**. Գյումրի, Հայաստան

**Նպատակ**. Խրախուսել, որ երիտասարդ կանայք և աղջիկները հետևեն իրենց առողջությանը և բացահայտեն առաջնորդ լինելու իրենց ներուժը՝ առաջնորդության և հեծանվավարության ակումբի, դասընթացների, միջոցառումների և ծրագրի ընթացքում հեծանիվների ու սարքավորումների անվճար տրամադրման միջոցով:

**Նկարագրություն**. Գյումրու «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» ՀԿ-ն «Խաղաղության կորպուս-Հայաստանի» կամավոր Լին Ռոբսոնի հետ համագործակցությամբ և «Խաղաղության կորպուս-Հայաստանի» ֆինանսավորմամբ «Երիտասարդների տուն» բաց երիտասարդական կենտրոնի շրջանակներում իրականացրել է «Աղջիկների հեծանվավարության ծրագիրը»:

Ծրագիրը ներառել է առաջնորդության և հեծանվավարության ակումբ, դասընթացներ, միջոցառումներ, ինչպիսիք էին՝ էքսկուրսիաները Գյումրիում և դրանից դուրս: Ծրագրին մասնակցել են 13-24 տարեկան թվով 50 աղջիկներ և երիտասարդ կանայք, որոնց համար մասնակցությունն անվճար էր:

**When**: May -September, 2018

**Where**: Gyumri, Armenia

**Aim**: To encourage young women and girls to follow healthy lifestyle and discover their potential to be a leader through leadership and biking club, trainings, events as well as through provision of free bicycles and equipment during the project.

**Description**: Gyumri "Youth Initiative Centre" NGO in cooperation with Peace Corps volunteer Lynn Robson and with the financial support of "Peace Corps Armenia" within the framwork of the"Youth House" open youth centre has implemented "Girls Bicycle Project". The project included bicycle and leadership clubs, trainings, events like excursions in Gyumri and in its surroundings.

50 girls aged 13-24 and young women took part in the project, which was free of charge. In the frame of the project, bike riding lessons and open practices were organized during which our volunteer coaches taught not only how to ride a bike, but also taught bike's construction and simple technical details such as safety rules.





Ծրագրի շրջանակներում իրականացվել են հեծանվավարության պարապմունքներ, բաց վարժանքներ, որոնց ընթացքում կամավոր մարզիչները մասնակիցներին սովորեցրել են ոչ միայն հեծանիվ վարել, այլ նաև ներկայացրել են հեծանիվ-ների կառուցվածքը, փոխանցել տեխնիկական սպասարկման բազային հմտություններ և ծանոթացրել անվտանգության կանոններին:

Ծրագրի ընթացքում «Երիտասարդների տուն» բաց երիտասարդական կենտրոնում իրականացվել է նաև «Աղջիկների առաջնորդության և հեծանվավարության ակումբը»: Ակումբը ներառել է առաջնորդության թեմայով թվով 16 դասընթաց-քննարկում: Քննարկումները վարել են Լին Ռոբսոնը և քննարկվող թեմաների ոլորտում փորձառու հրավիրված մասնագետներ:

Ակումբը հաջողությամբ ավարտած անձանց շնորհվել են հավաստագրեր և հնարավորություն է տրվել մասնակցել 2019 թվականի «Աղջիկների առաջնորդության և հեծանվավարության ակումբին»՝ որպես մարզիչներ:

**Ծրագրի բյուջե**. $3,927.83 ԱՄՆ դոլար

During the project “Girls Leadership Club” was held at “Youth House”. 16 trainings and discussions were held in the frame of the club.

The discussions were held by Lynn Robson and experienced professionals of the discussed fields. At the end of the club certificates were given to the participants who went through the whole course. They were also given the chance to be involved in next year trainings as coaches.

**Project budget**: 3,927.83 USD







# «ԿԱՄԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐ-2018»

# “INTERNATIONAL VOLUNTEER DAY-2018”

**Երբ**. Դեկտեմբեր 4-5, 2018

**Որտեղ**. Գյումրի, Հայաստան

**Նպատակ**. Նպաստել Հայաստանում կամավորական աշխատանքի մշակույթի և ոլորտային ենթակառուցվածքների զարգացմանը:

**Նկարագրություն**. Գյումրու «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» ՀԿ-ն, «Հայկական Կարիտաս» բարեսիրական կազմակերպության ու «ԿԱԶԱ» շվեյցարական մարդասիրական հիմնադրամի հետ համատեղ, «Կամավորների միջազգային օր-2018» խորագիրը կրող ծրագրի շրջանակում 2018 թվականի դեկտեմբերի 4-5-ին Գյումրիում անցկացրեց երկօրյա միջոցառումների շարք՝ «Կամավորության հնարավորություններ» և «Կամավորության հեռանկարները Հայաստանում» ենթախորագրերի ներքո:

Ծրագրի առաջին օրն ընթացել է բաց-մասնակցային փորմատով, որին ներկա է գտնվել շուրջ 150 անձ: Անցկացվել է կամավորության հնարավորությունների տոնավաճառ, որի ընթացքում ներկայացվել են «Հայկական Կարիտաս» ԲՀԿ-ի, «ԿԱԶԱ» հիմնադրամի, ԵՆԿ-ի, «Հայ կամավորների բանկի», «Էրազմուս+»-ի, «Երիտասարդների տան» ընձեռած հնարավորությունները:

Իրականացվել են աշխատարաններ՝ «Եվրոպական համերաշխության կորպուս» (նախկին EVS), «Վիքինախագծեր և հնարավորություններ», «Ակումբավարությունը որպես կամավորական հնարավորություն», «Երկուսով աշխատանքի համար», «Կամավորությունը Գերմանիայում. փորձի փոխանակում» թեմաներով: 7 կամավոր հանդես է եկել ելույթով՝ ներկայացնելով իր լավագույն փորձն ու նախագծերը: Իրականացվել է տարվա լավագույն կամավորական նախագծի ընտրություն և պարգևատրում՝ մրցանակի է արժանացել «Հեշտ կյանք» բարեգործական նախաձեռնության թիմը:





**When**: December 4-5, 2018

**Where**: Gyumri, Armenia

**Aim**: To promote the development of culture and sectoral infrastructure of voluntary work in Armenia.

**Description**: Gyumri “Youth Initiative Centre” NGO in partnership with “Armenian Caritas” benevolent NGO and KASA Swiss Humanitarian Foundation within the framework of International Volunteers Day 2018 implemented two-day event- “Youth opportunities” and “Volunteering Prospects in Armenia” on December 4-5, 2018.

The first day was held with open- participatory format with participation of 150 participants. Volunteering opportunities fair was implemented, during which opportunities proposed by “Armenian Caritas” benevolent NGO, KASA Swiss Humanitarian Foundation, Gyumri “Youth Initiative Centre” NGO, “Armenian Volunteers Bank”, “Erasmus+ Youth. Infro Centre”, “Youth House” open youth center were presented.

Ծրագրի երկրորդ օրը՝ Ֆորումը անցկացվել է լիագումար թեմատիկ քննարկումների և ներկայացուցչական աշխատանքային խմբերի հանդիպման ձևաչափով, որին մասնակցել է 63 հոգի:

Միջոցառման բոլոր բաղադրիչներն ունեցել են ուսուցողական բնույթ: Ծրագրի միջոցառումներն ու հանդիպումներն ընթացել են ոչ ֆորմալ ներկայացումների և անկաշկանդ քննարկումների, հարցուպատասխանների ձևաչափով: Ընթացքում մասնակիցների հետ որոշվել են գիտելիքների գործնական կիրառման հնարավոր մեխանիզմները՝ ինչը լայնացրել է նշված թեմաների վերաբերյալ կողմերի պատկերացումներն ու զարգացրել է մասնագիտական ու անհատական կարողությունները: Ծրագրի մի մասը նվիրված է եղել մասնագիտական զարգացմանն ու փորձի փոխանակմանը:

Ծրագրի ընթացքում ձեռք բերված բովանդակային արդյունքները անվճար տարածվել և տրամադրվել են հնարավոր բոլոր շահագրգիռ անձանց ու կառույցներին:
Գործընկերների հետ ձեռք է բերվել պայմանավորվածություն՝ միջոցառումներն ամենամյա դարձնելու և այլ նմանատիպ ծրագրեր համատեղ իրականացնելու վերաբերյալ:

**Ծրագրի բյուջեն**. 2.467.070 դրամ

Several workshops were held on “European Solidarity Corps” (former EVS), “Wiki projects and opportunities”, “Leading club as a voluntary opportunity”, “Together for work”, “Volunteering in Germany. Experience exchange”. 7 volunteers shared their success stories and projects. Selection and awarding of the best volunteer project of the year took place, "Easy Life" charitable initiative team received the award.

On the second day thematic discussion and workshops were implemented with 63 participants. The two components of the project were held within the frame of different informal and non-formal teaching methods.

The results of the discussions have been provided to all possible stakeholders.
There is an agreement with partners making the events annual and implementing such new projects together.

The Budget: 2.467.070 AMD







# ԵՎՐՈՊԱԿԱՆ ԿԱՄԱՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

# EUROPEAN VOLUNTARY SERVICE

Գյումրու «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» ՀԿ-ն, Եվրամիության «Երիտասարդությունը շարժման մեջ» և «Էրազմուս+» ծրագրերի շրջանակում, իրականցնում է «Եվրոպական կամավորա-կան ծառայություն» ծրագիրը: ԵԿԾ-ն հայ և եվրոպացի երիտասարդներին կամավորա-կան աշխատանք կատարելու հնարավորություն է տալիս Հայաստանում և Եվրամիության անդամ երկրներում:

ԵԿԾ նպատակն է՝ երիտասարդների մեջ սերմանել մարդասիրություն, հանդուրժողականություն և խրախուսել ակտիվ քաղաքացիություն՝ հանուն համայնքային զարգացման:

2018 թվականին ԵՆԿ-ն հյուրընկալել է 3 կամավոր Սլովակիայից, Էստոնիայց, Չեխիայից և ուղարկել 8 կամավոր, ովքեր իրենց կամավորական ծառայությունն են իրականացրել Լեհաստանում, Հունաստանում, Խորվաթիայում, Հունգարիայում և Գերմանիայում:

Gyumri "Youth Initiative Centre" in the framework of "Youth In Action" and "Erasmus+" programmes implements the "European Voluntary Service" programmes. EVS gives Armenian and European youth a chance to volunteer in Armenia and EU countries.

EVS aims to instill in young people humanism, tolerance and to encourage active citizenship for community development.

During 2018 YIC hosted 3 volunteers from Slovakia, Estonia and Czech Republic and have sent 8 volunteers who carried out their voluntary service in Poland, Greece, Croatia,
Hungary and Germany.

## ԵԿԾ ՈՒՂԱՐԿՈՒՄ
## SENT EVS

8 volunteers
կամավոր

3 5

Գերմանիա, Լեհաստան, Հունաստան, Հունգարիա, Խորվաթիա

Germany, Poland, Greece, Hungary, Croatia

## ԵԿԾ ՀՅՈՒՐԸՆԿԱԼՈՒՄ
## HOSTED EVS

3 volunteers
կամավոր

2 1

Սլովակիա, Էստոնիա, Չեխիա

Slovakia, Estonia, Czech

ԵԿԾ ՈՒՂԱՐԿՈՒՄ
# EVS SENDING

**«European voluntary service at the CFB»**

**Հյուրընկալող կազմակերպություն**. Centre Francais de Berlin gGmbH

**Երբ**. Փետրվար - նոյեմբեր, 2018

**Որտեղ**. Բեռլին, Գերմանիա

**Նպատակ**. Նպաստել երիտասարդների անհատական և սոցիալական զարգացմանը, տրամադրել ապահով և նպաստավոր միջավայր՝ վերջիններիս ներուժի հզորացման համար:

**Կամավորի անուն**. Ռիմմա Շահվերդյան

**Կամավորի առաջադրանքներ**. Աջակցել կազմակերպությանը միջազգային ծրագրերի իրականացման հարցում, երիտասարդների հետ իրականացնել ամենօրյա աշխատանք տեղական երիտասարդական կենտրոնում, վերջիններիս համար կազմակերպել ժամանցային և միջմշակութային միջոցառումներ, իրականացնել սեփական նախաձեռնություններ:

**Ծրագրի բյուջե**. 7, 940 եվրո





**“European voluntary service at the CFB”**

**Hosting organization**: Centre Francais de Berlin GmbH

**When**: February–November, 2018

**Where**: Berlin, Germany

**Aim**: To empower and assist young people in their personal and social development, to provide a safe and supportive environment for young people to realize and achieve their full potential.

**Volunteer Name**: Rimma Shahverdyan

**Volunteer's Tasks**: To support the organization in implementing international projects, to conduct daily work with the youngsters in the Youth Centre, organize leisure time and intercultural activities for them and implement her own ideas and initiatives.

**Budget**: 7, 940 EUR.






## «EVS: Dream BIG»

**Հյուրընկալող կազմակերպություն**. Stowarzyszenie “Dorośli – Dzieciom”

**Երբ**. Ապրիլ - սեպտեմբեր, 2018

**Որտեղ**. Սեպոլնո-Կրաժենսկի, Լեհաստան

**Նպատակ**. Նպաստել տեղական երիտասարդական աշխատանքի և տեղական համայնքի զարգացմանը՝ երեխաների և երիտասարդների ակտիվության բարձրացման միջոցով:

**Կամավորի անուն**. Դիանա Քոչարյան

**Կամավորի առաջադրանքներ**. Նախապատրաստել և անցկացնել դասընթացներ երիտասարդների համար արվեստ, երաժշտություն, թատրոն խոհարարություն, լուսանկարչություն, լրագրություն թեմաներով, կազմակերպել և մասնակցել տարբեր սոցիալական և մշակութային միջոցառումների, ինչպիսիք են ցուցահանդեսներ, ցուցադրություններ, աջակցել «Երիտասարդ ստեղծագործողների ակումբի» գործունեության համար վեբ բլոգի պատրաստման աշխատանքներին:

**Ծրագրի բյուջե**. 73, 505 եվրո:

## “EVS: Dream BIG”

**Hosting organization**: Stowarzyszenie “Dorośli-Dzieciom”

**When**: April - September, 2018

**Where**: Sępólno Krajeńskie, Poland

**Aim**: To contribute to the development of local youth work and local community through increasing activity and well-being of children and young adults.

**Volunteer Name**: Diana Kocharyan

**Volunteer Tasks**: To prepare and lead classes for young people on the topics art, music, theatre, cooking, photography and journalism, to organize and take part in various social and art events such as exhibitions and shows, to help in creating a web blog about activities in Young Creators' Club.

**Budget**: 73, 505 EUR.








## “KNOWledge vol.3”

**Hosting organization**: “K.A.NE.” Social Youth Development Organization

**When**: November, 2018 – July, 2019

**Where**: Kalamata, Greece

**Aim**: To foster youth motivation, promote the sense of initiative and develop the competences of young people to implement those initiatives.

**Volunteer Name**: Anna Khlghatyan

**Volunteer's Tasks**: To conduct daily work with the youngsters in the Youth Centre, organize leisure time and intercultural activities for them, to organize thematic workshops in the local community, to be involved in the on-going projects of the organization, write articles and lead the EVS blog and implement her own ideas and initiatives.

**Budget**: 7, 645 EUR.

## «KNOWledge vol.3»

**Հյուրընկալող կազմակերպություն**. “K.A.NE.” Social Youth Development Organization

**Երբ**. Նոյեմբեր, 2018 - հուլիս, 2019

**Որտեղ**. Կալամատա, Հունաստան

**Նպատակ**. Խթանել երիտասարդական նախաձեռնությունները, զարգացնել երիտասարդների կարողությունները՝ սեփական նախաձեռնությունների իրականացնելու համար:

**Կամավորի անուն**. Աննա Խլղաթյան

**Կամավորի առաջադրանքներ**. Երիտասարդների հետ իրականացնել ամենօրյա աշխատանք տեղական երիտասարդական կենտրոնում, վերջիններիս համար կազմակերպել ժամանցային և միջմշակութային միջոցառումներ, տեղի համայնքում կազմակերպել թեմատիկ աշխատարաններ, ներգրավվել կազմակերպության ծրագրերում, հոդվածներ գրել և վարել ԵԿԾ բլոգը, իրականացնել սեփական նախաձեռնություններ:

**Ծրագրի բյուջե**. 7, 645 եվրո:





## «Language and Cultural Challenge»

**Հյուրընկալող կազմակերպություն**. Talentum Foundation

**Երբ**. Հուլիս - Օգոստոս, 2018

**Որտեղ**. Սեգեդ, Հունգարիա

**Նպատակ**. Բարձրացնել տեղի երիտասարդների միջմշակութային իրազեկվածության մակարդակը, վերջիններիս ինքնավստահությունը և բարելավել լեզվական հմտությունները:

**Կամավորի անուն**. Ասյա Սեպխանյան, Ելենա Բաբայան

**Կամավորի առաջադրանքներ**. Հունգարացի պատանիների համար կազմակերպել 2 ամառային ճամբար, ակտիվ խաղեր, նախապատրաստել միօրյա դասընթաց սեփական երկրի մասին՝ ներառելով խաղեր և ցուցադրություններ, անցկացնել միջմշակութային երեկոներ, կազմակերպել և մասնակցել հանրային միջոցառումների:

**Ծրագրի բյուջե**. 1, 720 եվրո:

## "Language and Cultural Challenge"

**Hosting organization**: Talentum Foundation

**When**: July - August, 2018

**Where**: Szeged, Hungary

**Aim**: To develop local youngster's cultural sensitivity, increase self-esteem and improve language skills.

**Volunteer Name**: Asya Sepkhanyan, Elena Babayan

**Volunteers' Tasks**: To organize two summer camps for Hungarian teenagers, interactive games for young people, write a one-day training programme about their country including games and presentations, hold intercultural nights, organize and participate in public activities.

**Budget**: 1, 720 EUR.







«3-4-Adventures»

**Հյուրընկալող կազմակերպություն**. The University of Economy in Bydgoszcz

**Երբ**. Սեպտեմբեր, 2018 - սեպտեմբեր, 2019

**Որտեղ**. Բիդգոշ, Լեհաստան

**Նպատակ**. Բարձրացնել տեղի երիտասարդների միջմշակութային իրազեկվածության մակարդակը, վերջիններիս ինքնավստահությունը և բարելավել լեզվական հմտությունները:

**Կամավորի անուն**. Դավիթ Մուրադյան

**Կամավորի առաջադրանքներ**. Միջազգային ուսանողների համար կազմակերպել տարբեր միջոցառումներ ու դասընթացներ, անցկացնել միջմշակութային երեկոներ, ներգրավվել ու աջակցել Էրազմուս+ ծրագրի շրջանակներում իրականացվող երիտասարդական փոխանակման ծրագրերի կազմակերպչական թիմին, լուսանկարչության թանգարանում կազմակերպել ցուցահանդեսներ ու հանրային միջոցառումներ:

**Ծրագրի բյուջե**. 8, 611 եվրո:







"3-4-Adventures"

**Hosting organization**: The University of Economy in Bydgoszcz

**When**: September, 2018 – September, 2019

**Where**: Bydgoszcz, Poland

**Aim**: To develop local youngster's cultural sensitivity, increase self-esteem and improve language skills.

**Volunteer Name**: David Muradyan

**Volunteer's Tasks**: To organize various events and trainings for international students, hold intercultural nights, to be involved and assist the Erasmus + Youth Exchange organizational team, organize exhibitions and public events in the Museum of Photography.

**Budget**: 8, 611 EUR.

## «ALIVE – Act, Learn, Improve, Volunteer, Empower»

**Հյուրընկալող կազմակերպություն**. Lokalna akcijska grupa (LAG) Vallis Colapis

**Երբ**. Հոկտեմբեր, 2018 - հունիս, 2019

**Որտեղ**. Օզալ, Խորվաթիա

**Նպատակ**. Նպաստել երիտասարդների ակտիվ մասնակցությանը և Էրազմուս+ ծրագրում ներգրավված երիտասարդների և գործընկեր կազմակերպությունների մասնագիտական զարգացմանը:

**Կամավորի անուն**. Րաֆֆի Շահբազյան, Աշոտ Թադևոսյան

**Կամավորի առաջադրանքներ**. Տեղի համայնքում կազմակերպել թեմատիկ աշխատարաններ Հայաստանի մասին՝ ներկայացնելով երկիրը, մշակույթը, սովորույթները, լեզուն և այլն, ինչպես նաև տեղեկատվություն տարածել «Էրազմուս+» ծրագրի և երիտասարդներին ու երիտասարդական կառույց-ներին վերջինիս ընձեռած հնարավորությունների մասին:

**Ծրագրի բյուջե**. 12, 826 եվրո:





## "ALIVE – Act, Learn, Improve, Volunteer, Empower"

**Hosting organization**: Lokalna akcijska grupa (LAG) Vallis Colapis

**When**: October, 2018 - June, 2019

**Where**: Ozalj, Croatia

**Aim**: To boost active participation of young people and professional development of youth and partner organisations linked to Erasmus+ programme.

**Volunteer Name**: Raffi Shahbazyan, Ashot Tadevosyan

**Volunteer's Tasks**: To organize thematic workshops about Armenia in the local community by presenting their country, culture, traditions, language, etc., as well as to promote Erasmus+ programme and share the knowledge about Erasmus+ posibilities for youth and youth organisations.

**Budget**: 12, 826 EUR.





# ԵԿԾ ՀՅՈՒՐԸՆԿԱԼՈՒՄ

# EVS HOSTING

### «Youth Volunteering Together 2»

**Երբ**. Հոկտեմբեր, 2018 - օգոստոս, 2019

**Որտեղ**. Գյումրի, Հայաստան

**Նպատակ**. Խթանել կամավորությունը և կապել արվեստը և միջմշակութային ուսուցումը՝ նպաստելով երիտասարդների հզորացմանը և ինքնազարգացմանը:

**Կամավորի անուն**. Յոզեֆ Բանյաս (Սլովակիա)

**Կամավորի առաջադրանքներ**. Աջակցել «Միջմշակութային ակումբի» և «Ուրբաթօրյա սրճարան»-ի կազմակերպչական աշխատանքներին, պլանավորել, նախապատրաստել և անցկացնել կամավորությունը խթանող միջոցառումներ՝ «Կամավորության ամիս ԵՆԿ-ի հետ» նախագծի շրջանակներում, կազմակերպել ֆոտոցուցահանդես, բացօթյա կինոդիտումներ, իրենց երկրի մշակույթի, ուտեստների, պարերի և այլնի ներկայացում, ինչպես նաև պատրաստել ԵՆԿ ամսական պարբերականը:

**Ծրագրի բյուջե**. 5, 978 եվրո:







### "Youth Volunteering Together 2"

**When**: October, 2018 - August, 2019

**Where**: Gyumri, Armenia

**Aim**: To promote volunteerism and link art and intercultural learning for the empowerment and self-development of young people.

**Volunteer Name**: Jozef Banas (Slovakia),

**Volunteer's Tasks**: To support in organizational activities of "Intercultural Club" and "Friday's Cafe", to plan, prepare and run promotional activities about volunteering called “Volunteering Month with YIC”, to organize a photo exhibition, an open air movie screenings and presentation of their culture, food, dances and so on, and to design YIC's monthly newsletter.

**Budget**: 5, 978 EUR.

## «Youth Volunteering Together»

**Երբ**. Մայիս, 2018 - փետրվար, 2019

**Որտեղ**. Գյումրի, Հայաստան

**Նպատակ**. Խթանել կամավորությունը և կապել արվեստը և միջմշակութային ուսուցումը՝ նպաստելով երիտասարդների հզորացմանը և ինքնազարգացմանը:

**Կամավորի անուն**. Բերթ Ցապով (Էստոնիա)

**Կամավորի առաջադրանքներ**. Աջակցել «Միջմշակութային ակումբի» և «Ուրբաթօրյա սրճարանի» կազմակերպչական աշխատանքներին, պլանավորել, նախապատրաստել և անցկացնել կամավորությունը խթանող միջոցառումներ՝ «Կամավորության ամիս ԵՆԿ-ի հետ» նախագծի շրջանակներում, կազմակերպել ֆոտոցուցահանդես, բացօթյա կինոդիտումներ, իրենց երկրի մշակույթի, ուտեստների, պարերի և այլնի ներկայացում, ինչպես նաև պատրաստել ԵՆԿ ամսական պարբերականը:

**Ծրագրի բյուջե**. 5, 370 եվրո:

## “Youth Volunteering Together”

**When**: May, 2018 - February, 2019

**Where**: Gyumri, Armenia

**Aim**: To promote volunteerism and link art and intercultural learning for the empowerment and self-development of young people.

**Volunteer Name**: Bert Tsapov (Estonia),

**Volunteer's Tasks**: To support in organizational activities of "Intercultural Club" and "Friday's Cafe", to plan, prepare and run promotional activities about volunteering called “Volunteering Month with YIC”, to organize a photo exhibition, an open air movie screenings and presentation of their culture, food, dances and so on, and to design YIC's monthly newsletter.

**Budget**: 5, 370 EUR.










## «Volunteering for Change»

**Երբ**. Հոկտեմբեր, 2018 - սեպտեմբեր, 2019

**Որտեղ**. Գյումրի, Հայաստան

**Նպատակ**. Նպաստել երիտասարդների ինքնազարգացմանը և բարձրացնել վերջիններիս դերը հասարակության մեջ՝ կամավորության խթանման, մատչելի ծառայությունների մատուցման և երիտասարդական աշխատանքի նորարարական մոտեցումների օգտագործման միջոցով:

**Կամավորի անուն**. Մարտինա Հորնիչկովա (Չեխիա)

**Կամավորի առաջադրանքներ**. «Երիտասարդների տուն» բաց երիտասարդական կենտրոնի շահառուների համար կազմակերպել մշակութային, սպորտային, կրթական և ստեղծագործական միջոցառումներ և աշխատարաններ, ներկայացնել երիտասարդական աշխատանքի իր երկրի փորձը, ներգրավվել հյուրընկալող կազմակերպության ընթացիկ ծրագրերում՝ մասնավորապես ֆոնդահայթայթման գործընթացում:

**Ծրագրի բյուջե**. 7, 398 եվրո:

## “Volunteering for Change”

**When**: October, 2018 - September, 2019

**Where**: Gyumri, Armenia

**Aim**: To ensure the self-development of young people and empower them to play an active role in the society through promoting volunteerism, providing accessible services and utilizing innovative approaches in youth work.

**Volunteer Name**: Martina Hornichkova (Czech Republic)

**Volunteer's Tasks**: To plan, prepare and run cultural, sport, educational and creative workshops for children and young people in the “Youth House” open youth centre, present youth work realities of her country by organizing different events to share the experience of youth work and assist in the on-going projects of the RO especially with the crowdfunding campaign.

**Budget**: 7, 398 EUR.





**Հյուրընկալող կազմակերպություն**. Une terre culturelle

**Երբ**. Նոյեմբեր, 2017-2018

**Որտեղ**. Մարսել, Ֆրանսիա

**Նպատակ**. Բարձրացնել տեղի երիտասարդների իրազեկվածության մակարդակը այնպիսի գաղափարների շուրջ, ինչպիսիք են՝ համերաշխությունը, կրթությունը, մշակույթը, միջազգային զարգացումը և մարդասիրությունը:

**Կամավորի անուն**. Անի Սարգսյան

**Կամավորի առաջադրանքներ**. Իրականացնել տարբեր միջոցառումներ դպրոցներում և համայնքում, որոնք կբարձրացնեն կազմակերպության ծրագրերի մասին իրազեկվածությունը, աջակցել կազմակերպությանը միջազգային ծրագրերի իրականացման հարցում:

**Ծրագրի բյուջե**. 6, 966 եվրո:

**Hosting organization**: Une terre culturelle

**When**: November, 2017- 2018

**Where**: Marseille, France

**Aim**: To raise awareness of local youth on such ideas as solidarity, education, culture, international development and humanism.

**Volunteer Name**: Ani Sargsyan

**Volunteer's Tasks**: Carry out various activities at schools and in the community that will raise awareness of the organization's projects and activities and support the organization in implementing international projects.

**Budget**: 6, 966 EUR.





**Երբ**. Փետրվար - օգոստոս, 2018

**Որտեղ**. Գյումրի, Հայաստան

**Նպատակ**. Խթանել կամավորությունը և միջմշակութային հաղորդակցությունը՝ հավասարը հավասարին ուսուցման և ոչ-ֆորմալ կրթական գործունեության միջոցով:

**Կամավորի անուն**. Լիդիա Վարթանիան (Ֆրանսիա)

**Կամավորի առաջադրանքներ**. Աջակցել «Ուրբաթօրյա սրճարանի» կազմակերպչական աշխատանքներին, պլանավորել, նախապատրաստել և անցկացնել ֆրանսերենի ակումբ:

**Ծրագրի բյուջե**. 3, 725 եվրո:

**When**: February - August, 2018

**Where**: Gyumri, Armenia

**Aim**: To promote volunteerism and intercultural communication through peer-to-peer learning and non-formal educational activities.

**Volunteer Name**: Lydia Vartanian (France),

**Volunteer's Tasks**: To support in organizational activities of “Friday's Cafe”, to plan, prepare and run French club.

**Budget**: 3, 725 EUR.

# German Federal Volunteer Service Act

**Հյուրընկալող կազմակերպություն**. Sozialer Friedensdienst Kassel e.V.

**Երբ**. Հոկտեմբեր, 2018 - 2019

**Որտեղ**. Գյոթինգեն, Գերմանիա

**Նպատակ**. Նպաստել երիտասարդական աշխատանքի զարգացմանը և ապահովել երիտասարդների միջմշակութային ուսուցումը:

**Կամավորի անուն**. Արմեն Հակոբյան

**Կամավորի առաջադրանքներ**.Տեղի մանկապարտեզում երեխաների համար կազմակերպել ժամանցային և միջմշակութային միջոցառումներ, իրականացնել սեփական նախաձեռնություններ:

**Ծրագրի բյուջեն**. 5, 360 եվրո:

**Hosting organization**: Sozialer Friedensdienst Kassel e.V.

**When**: October, 2018 - 2019

**Where**: Göttingen, Germany

**Aim**: To contribute to the development of youth work and intercultural learning of young people.

**Volunteer Name**: Armen Hakobyan

**Volunteer's Tasks**: To organize leisure time and intercultural activities for children in the local kindergarden and implement his own ideas and initiatives.

**Budget**: 5, 360 EUR.

Federal Office
of Family Affairs and
Civil Society Functions

# «ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԿՈՐՊՈՒՍ»

# “PEACE CORPS”

**Երբ**. Հունիս, 2017 - դեկտեմբեր, 2018

**Որտեղ**. Գյումրի, Հայաստան

**Նպատակ**. Նպաստել կազմակերպության կազմակերպական զարգացմանը և երիտասարդների հզորացմանը:

**Կամավորի անուն**. Քաթրին Լին Ռոբսոն (ԱՄՆ)

**Կամավորի առաջադրանքներ**. Աջակցել կազմակերպական զարգացմանը, կազմակերպության փոնդահայթայթման գործընթացին, ծրագրերի նախագծմանը և իրականացմանը, ներգրավվել կազմակերպության ընթացիկ ծրագրերում:

**When**: June, 2017 – December, 2018

**Where**: Gyumri, Armenia

**Aim**: To ensure organizational development and youth empowerment.

**Volunteer Name**: Catherine Lynn Robson (USA)

**Volunteer's Tasks**: To assist in the organizational development, fundraising, project writing and implementation phase and get involved in on-going projects of the organization.





# «Դեպի Հայք»

# “Birthright Armenia”

«Դեպի Հայք» ծրագրի նպատակն է զարգացնել և ամրապնդել հայրենիքի ու սփյուռքի երիտասարդների միջև կապերը, վերջիններիս հնարավորություն տալով մասնակցել Հայաստանի առօրյա կյանքին և ներդրում ունենալ հայրենիքի զարգացմանը կամավորական աշխատանքի միջոցով, միաժամանակ բարձրացնել սփյուռքի երիտասարդների ազգային ինքնագիտակցությունը:

The aim of “Birthright Armenia” project is to strengthen ties between the homeland and Diasporan youth, by affording them an opportunity to be a part of Armenia's daily life and to contribute to Armenia's development through work, study and volunteer experiences, while developing life-long personal ties and a renewed sense of Armenian identity.

**Կամավորի անուն**. Բարեթ Կալայիջյան (Նիդեռլանդներ)

**Երբ**. Հունվար - փետրվար, 2018

**Որտեղ**. Գյումրի, Հայաստան

**Կամավորի առաջադրանքներ**. «Երիտասարդների տուն» բաց երիտասարդական կենտրոնի երիտասարդական աշխատողների մասնագիտական կարողությունների զարգացմանն ուղղված հանդիպում-քննարկումների և կենտրոնի երիտասարդների հետ անհատական աշխատանքի վերաբերյալ աշխատարանների անցկացում:

**Volunteer Name**: Baret Kalayciyan (The Netherlands)

**When**: January - February, 2018

**Where**: Gyumri, Armenia

**Volunteer's Tasks**: To hold discussions with youth workers of “Youth House” open youth centre on professional development and to conduct workshops with the youngsters of the centre on individual work.





**Կամավորի անուն**. Արարադ Նար (Կանադա)

**Երբ**. Նոյեմբեր - դեկտեմբեր, 2018

**Որտեղ**. Գյումրի, Հայաստան

**Կամավորի առաջադրանքներ**. «Երիտասարդների տուն» բաց երիտասարդական կենտրոնի շահառուների համար կազմակերպել տարբեր մշակութային, սպորտային միջոցառումներ և առողջ ապրելակերպի թեմայով տարբեր աշխատարաններ, ներգրավվել կենտրոնի ֆոնդահայթայթման գործընթացում:

**Volunteer Name**: Ararad Nar (Canada)

**When**: November - December, 2018

**Where**: Gyumri, Armenia

**Volunteer's Tasks**: To plan, prepare and run cultural, sport activities and workshops on healthy lifestyle with the youngsters of “Youth House” open youth centre, to assist in the organization of a crowdfunding campaign.





# «Դեպի Հայք»

# “Birthright Armenia”

**Կամավորի անուն**. Զարուհի Կարապետյան (Ռուսաստանի Դաշնություն)

**Երբ**. Նոյեմբեր - դեկտեմբեր, 2018

**Որտեղ**. Գյումրի, Հայաստան

**Կամավորի առաջադրանքներ**. «Երիտասարդների տուն» բաց երիտասարդական կենտրոնում վարել ռուսերենի ակումբ:

**Volunteer Name**: Zaruhi Karapetyan (Russian Federation)

**When**: November - December, 2018

**Where**: Gyumri, Armenia

**Volunteer's Tasks**: To run a Russian language club in “Youth House” open youth centre.





**Կամավորի անուն**. Ֆեդերիկո Ավեդիսսյան (Արգենտինա)

**Երբ**. Նոյեմբեր - դեկտեմբեր, 2018

**Որտեղ**. Գյումրի, Հայաստան

**Կամավորի առաջադրանքներ**. «Երիտասարդների տուն» բաց երիտասարդական կենտրոնի շահառուների համար կազմակերպել տարբեր աշխատարաններ՝ շրջակա միջավայրի և բնապահպանության թեմաներով, պատանիների հետ պատրաստել ամանորյա զարդարանքներ:

**Volunteer Name**: Federico Avedissian (Argentina)

**When**: November – December, 2018

**Where**: Gyumri, Armenia

**Volunteer's Tasks**: To plan, prepare and run different workshops on environmental protection with the youngsters of “Youth House” open youth centre and to make Christmas cards and ornaments.

# «UPSHIFT ՀԱՅԱՍՏԱՆ» ԴԵՌԱՀԱՍՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ և ԶՈՐԱԿՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

***Երբ՝*** ***Դեկտեմբեր 2018 - սեպտեմբեր 2019***

***Որտեղ՝*** ***Գյումրի և Սպիտակ, Հայաստան***

***Նպատակը՝***

Նպաստել Հայաստանում 12-18 տարեկան դեռահասներինախաձեռնողականության և քաղաքացիական ակտիվության բարձրացմանը՝ վերջիններիս ներգրավելով իրենց համայնքների կյանքի որակի բարելավմանն ուղղված գործընթացների մեջ

***Նկարագրություն.***

Գյումրու «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» հասարակական կազմակերպությունը և Յունիսեֆի հայաստանյան գրասենյակը 2018 թվականին միավորեցին իրենց ջանքերը Յունիսեֆի «UPSHIFT» դեռահասների զարգացման և զորակցման գլոբալ ծրագրի պիլոտային տարբերակը Հայաստանում ներդնելու համար: Ծրագրի ուղղակի շահառուներն էին Գյումրի և Սպիտակ քաղաքներից 12-18տարեկան պատանիները:

Ծրագրի սկզբում տեղեկատվական հանդիպումներ անցկացվեցին Գյումրի և Սպիտակ համայնքներում գործող թվով 18 դպրոցներում, քոլեջներում և տարբեր հաստատություններում, որոնց ընթացքում 12-18 տարեկան 577 դեռահասի ներկայացվեցին ծրագրի նպատակները ու ծրագրին դիմելու կարգը: Տեղեկատվական հանդիպումներին զուգընթաց անցկացվեցին դեռահասների տարիքային առանձնահատկություններին համապատասխան թեմաներով աշխատարաններ՝ նպաստելով պատանիների համընդհանուր զարգացմանը: Այնուհետև հայտարարվեց Շիրակի ու Լոռու մարզերի 12-18 տարեկան երիտասարդների՝ համայնքային խնդիրներ լուծելուն միտված գաղափարների մրցույթ: Ներկայացված 43 համայնքային գաղափարներից ընտրվեց 10-ը, որոնք ներկայացնող պատանիները մասնակցեցին վերապատրաստման դասընթացների՝ սովորելով, թե ինչպես գաղափարը վերածել ծրագրի, որը հնարավոր կլինի իրագործել: Երկրորդ փուլում մրցութային հանձնաժողովը այդ 10 ծրագրերից ընտրեց լավագույն 5-ը, որոնք կյանքի կոչելու համար «Smart map», «Ծառատունկ, թռչունների համար բներ և կերամաններ», «Էկոլոգիապես մաքուր տոպրակներ», «GyumRiver», «Համայնքը մեր ձեռքերով» թիմերը ստացան 150.000-ական դրամ: Յուրաքանչյուր թիմի կցված էր մեկ մենթոր՝ ով աջակցություն էր տրամադրում դեռահասների կողմից առաջարկված ծրագրային գաղափարները մշակելու և կյանքի կոչելու համար: Ընտրված ծրագրերը թիմերի կողմից իրենց համայնքներում իրականացվեցին մայիսից հուլիս ամիսներին:

Ծրագիրն ամփոփվեց սեպտեմբերին կայացած ավարտական միջոցառմամբ:

Ծրագրի բյուջեն՝ 16.696.500 ՀՀ դրամ

# "UPSHIFT ARMENIA" ADOLESCENT DEVELOPMENT AND EMPOWERMENT PROGRAMME

***When:*** *December 2018 - September 2019*

***Where:*** *Gyumri and Spitak, Armenia*

***When:*** December 2018 - September 2019

***Where:*** Gyumri and Spitak, Armenia

***Description:***

Gyumri "Youth Initiatives Centre" NGO and UNICEF Armenia have joined their efforts to implement "UPSHIFT Armenia" adolescent development and empowerment programme. Young people in the 12-18 age group (youth and adolescents), from Shirak region and Spitak were the target of the project.

In the beginning of the project informational meetings were held in 18 institutions of Gyumri and Spitak for the dissemination of information about the project and recruiting youth. 577 teenagers aged 12 to 18 took part in informational meetings. For the personal development of young people, 8 topics were chosen to implement workshops for youngsters, taking into account the results of previous surveys done among them. Then, a competition for ideas of community projects was announced for young people aged 12-18 in Shirak and Lori regions. Out of 43 community projects 10 were selected and those teams attended training sessions learning how to turn the idea into a project that could be implemented. In the second round, the jury selected the top 5 out of 10 projects that received 150,000 AMD to be implemented by "Smart map", "Tree planting, birds houses and feeders", "Eco bags", "GyumRiver" and "Community with our hands" teams. Each team had one mentor who provided support to develop and implement the projects. The projects were implemented from May till the end of July. The project was summed up with the closing event in September.

# ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿ 3

# STRATEGIC AIM 3

Նպաստել հասարակության մեջ երիտասարդության դերի բարձրացմանը

To contribute to increasing the role of young people in the society

## 3.1

Բարձրացնել երիտասարդների իրավագիտակցության մակարդակը

To raise the level of legal awareness of the youth

## 3.2

Ամրապնդել երիտասարդների և որոշում կայացնողների միջև երկխոսությունը

To strengthen the dialogue between the youth and the decision-makers

## 3.3

Իրազեկել հանրությանը երիտասարդության հիմնախնդիրների մասին

To raise the awareness about the youth issues in the society

## 3.4

Պաշտպանել երիտասարդների շահերն ու իրավունքները

To protect youth's rights and interests

# «ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐ 2018»

# INTERNATIONAL YOUTH DAY 2018

Երբ. Օգոստոս 11, 2018

Որտեղ. Գյումրի, Հայաստան

Նկարագրություն. 2018թ. օգոստոսի 11-ին Գյումրու «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» ՀԿ-ն ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի հայաստանյան գրասենյակի, «ՍԱԼՏՈ Արևելյան Եվրոպա և Կովկաս ռեսուրսային կենտրոնի», «ArmEvents» ոչ-ֆորմալ խմբի հետ համատեղ հանդես եկավ մեծամասշտաբ հանրային միջոցառումների իրականացման նախաձեռնությամբ:

Միջոցառումների մեկնարկը տրվեց օգոստոսի 10-ին կազմակերպված մամուլի ասուլիսով, որի ընթացքում մեդիա ոլորտի ներկայացուցիչներին ներկայացվեց երիտասարդների միջազգային օրվան նվիրված միջոցառումների ցանկը, ինչպես նաև խոսվեց այս տարվա համար ընտրված խորագրերի մասին:

Օգոստոսի 11-ին միջոցառումները մեկնարկեցին երիտասարդների միջազգային օրվա շրջանակներում Գյումրիում հյուրընկալված Եվրամիության Կրթական համակարգի զարգացման հիմնադրամի, ՍԱԼՏՈ Արևելյան Եվրոպա և Կովկաս ռեսուրսային կենտրոնի պատվիրակության ու Գյումրու համայնքապետ Սամվել Բալասանյանի հետ տեղի ունեցած ճանաչողական և գործընկերության հաստատման հանդիպմամբ: Հանդիպման ընթացքում խոսվեց երիտասարդական միջազգային համագործակցության և Գյումրիում երիտասարդական ծրագրերի իրականացման կարևորության մասին: Կողմերը պատրաստակամություն հայտնեցին համագործակցելու ինչպես տեղական, այնպես էլ միջազգային ծրագրերի շուրջ:

Պաշտոնական հանդիպմանն անմիջապես հաջորդեցին հանրային միջոցառումները, որոնց մեկնարկն ազդարարվեց Շառլ Ազնավուրի անվան հրապարակից մինչև թատերական հրապարակ ընթացող քայլերթով և հեծանվաերթով, որն ուղեկցվեց երաժշտությամբ և տոնական տրամադրությամբ: Քայլերթին և հեծանվաերթին միացել էին տարբեր կառույցների ներկայացուցիչներ ինչպես Գյումրիից, այնպես էլ Հայաստանի տարբեր քաղաքներից:

When: August 11, 2018

Where: Gyumri, Armenia

Description: On the 11th of August Gyumri "Youth Initiative Centre" NGO in cooperation with the United Nations Population Fund Armenia, SALTO Eastern Europe and Caucasus Resource Centre and "ArmEvents" non-formal group initiated the implementation of large-scale public events in Gyumri dedicated to the International Youth Day.

The launch of the events was given on the 10th of August with a press-conference, which aimed at presenting the agenda of events dedicated to the International Youth Day to the media representatives as well as speaking about the themes chosen for International Youth Day 2018.

On the 11th of August the events started with a cognitive and partnership building meeting at the Gyumri municipality where the delegation of the Foundation for the Development of Education System of European Union and the representatives of SALTO Eastern Europe and Caucasus Resource Centre hosted in Gyumri by Gyumri Youth Initiative Centre NGO in the frames of International Youth Day events met with the Gyumri Mayor Samvel Balasanyan. During the meeting the importance of international youth cooperation and implementation of youth projects in Gyumri was discussed. The sides expressed readiness to cooperate in the frames of both local and international projects.
The official meeting was immediately followed by public events. The launch of the events was given with a March and Bike Ride from Charles Aznavour Square to Gyumri Theatrical Square accompanied by music and festive mood. The March and Bike Ride was attended by the representatives of different organizations from Gyumri and other cities of Armenia.

Այնուհետև բոլոր ներկաները հնարավորություն ստացան թատերական հրապարակում տեղադրված «Էրազմուս+» ծրագրի տեղեկատվական տաղավարից տեղեկանալ «Էրազմուս+ Երիտասարդություն» ծրագրի կողմից երիտասարդներին ընձեռվող հնարավորությունների մասին, որը ներկայացվեց Գյումրիում հյուրընկալված «Եվրոպական կամավորական ծառայություն» միջազգային երիտասարդական հավաքի մասնակիցների և Հայաստանում «Էրազմուս+ Youth. Տեղեկատվական կենտրոնի աշխատակիցների կողմից:

Թատերական հրապարակում ակտիվ, գունեղ, երիտասարդական մթնոլորտն ու տոնական տրամադրությունը շարունակվեց Գյումրիում առաջին անգամ անցկացվող «COLOR FEST GYUMRI» գույների փառատոնի ուղեկցությամբ՝ գունավորելով քաղաքը, երիտասարդներին ու Գյումրի ժամանած հյուրերին:

Երիտասարդների միջազգային օրվան նվիրված միջոցառումների շարքը եզրափակվեց բացօթյա համերգով՝ Երևանից ժամանած փոփ-ջազային երգչուհի Արփիի և DJ-ներ Cenn_gg-ի ու Minasoff-ի մասնակցությամբ:

Գյումրիում երիտասարդների միջազգային օրվան նվիրված միջոցառման իրականացմանն աջակցեցին՝ Գյումրու քաղաքապետարանը, Հայաստանում «Էրազմուս+ Youth. Տեղեկատվական կենտրոնը, «ԾԱՅԳ» մարզային հեռուստաընկերությունը, «Ռադիո Հայ Գյումրի» ռադիոկայանը, «Շիրակ» հանրային հեռուստառադիոընկերությունը, «Չերքեզի Ձոր» ռեստորանը, «Դիզայն բուտիք» ընկերությունը, «ՍՈԼՈ բյութի» գեղեցկության սրահը և Գյումրու Վարդան Աճեմյանի անվան դրամա-տիկական թատրոնը:

**Ծրագրի բյուջե**. 2.468.450 ՀՀ դրամ

Later in the Theatrical Square all the attendees had an opportunity to learn about Erasmus+ Youth opportunities provided to the young people from the Erasmus+ Info Tent presented by the Erasmus+ Youth. Info Centre in Armenia and the participants of the “EVS Event” hosted in Gyumri.

The active, colorful, youthful atmosphere and the festive mood continued in the Theatrical Square with the "COLOR FEST GYUMRI" held for the first time in Gyumri. The festival colored the city, the young people and all the guests who visited Gyumri.
The series of events dedicated to the International Youth Day ended with an open-air concert with the participation of famous and beloved pop-jaz singer Arpi as well as the DJ-s Cenn_gg and Minasoff from Yerevan.

The International Youth Day event in Gyumri was supported by Gyumri Municipality, Erasmus+ Youth. Info Centre in Armenia, “Tsayg” Regional Television, “Radio Hay Gyumri” Radio station, “Shirak” State Television, "Cherkezi Dzor" restaurant, “Design Boutique” company, “Solo Beauty” salon and Gyumri Dramatic Theatre.

**Budget**: 2.468.450 AMD







# «ԲԱՑ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ. ԳՅՈՒՄՐԻՈՒՄ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՀԶՈՐԱՑՈՒՄ» ԾՐԱԳԻՐ

# "OPEN YOUTH WORK: EMPOWERING YOUNG PEOPLE IN GYUMRI" PROJECT

Երբ. Հոկտեմբեր, 2017 - 2018

Որտեղ. Գյումրի, Շիրակի մարզ

Նպատակ. Բարձրացնել Հայաստանում՝ մասնավորապես Գյումրիում, երիտասարդների քաղաքացիական ակտիվությունն ու բարեկեցությունը՝ երիտասարդական աշխատանքի և երիտասարդների մասնակցության նորարարական մոտեցումների կիրառման միջոցով:

Նկարագրություն. Ծրագիրը բաղկացած է եղել հետևյալ 3 բաղադրիչներից՝

- բաց երիտասարդական կենտրոնի շրջանակներում մասնագիտական երիտասարդական աշխատանքի ծառայությունների տրամադրում՝ 13-18 տարեկան պատանիներին,

- երիտասարդական աշխատողների կարողությունների զարգացում,

- մշտադիտարկում և գնահատում, շահերի պաշտպանություն:

Ծրագրի ակնկալվող արդյունքներն էին.

- Ծրագրի ավարտին երիտասարդական կենտրոնի շրջանակներում 1200 ժամ տևողությամբ բազմապրոֆիլ, անվճար ծառայություններ տրամադրել Գյումրիում առնվազն 600 մարգինալացված 13-18 տարեկան երիտասարդների:

- Ծրագրի ավարտին ապահովել Գյումրիում երիտասարդական և հարակից ոլորտներում ներգրավված շուրջ 200 մասնագետի մասնակցությունը՝ 240 ժամ տևողությամբ կարողությունների զարգացման գործողությունների՝ միտված պետական և ոչ-պետական կառույցների երիտասարդներին մատուցվող ծառայությունների որակի բարձրացմանը:

- Ծրագրի ավարտին շահագրգիռ կողմերի առնվազն 50 ներկայացուցչի իրազեկել բաց երիտասարդական աշխատանքի վերաբերյալ:

When: October, 2017 - 2018

Where: Gyumri, Armenia

Aim: To enhance civic activity and wellbeing amongst the youth in Armenia, particularly in Gyumri, through modeling and promoting innovative approaches to youth work and youth participation.

Description. The project consisted of 3 components:

- Provision of professional youth work services for young people aged 13-18 within the framework of Open Youth Centre,

- Capacity development of youth workers,

-Monitoring & Evaluation and Advocacy.

The expected results of the project were:

- In the end of the project at least 600 marginalized young people aged 13-18 from Gyumri would have accessed, free of charge, multi-disciplinary quality services at the youth centre, built upon open youth work methodology, through 1200 hours of youth work services delivered.

- In the end of the project 200 professionals engaged in youth work and related fields and working or volunteering in state and non-state organizations in Gyumri would have undergone capacity building activities, through 240 hours of training services delivered.

- In the end of the project at least 50 stakeholder representatives would be informed about the open youth work, also one data package related to the Centre operation and at least one package of evidence-based policy recommendations usable on local, regional and national levels would be created.

Ծրագիրը համաֆինանսավորվել է Եվրոպական միության կողմից և իրականացվել է ԵՄ կողմից ֆինանսավորվող «Աջակցություն ՀՀ քաղաքացիական հասարակության կազմակերպությունների կարողությունների հզորացմանը» ծրագրի փոքր դրամաշնորհային նախագծի շրջանակներում, Գյումրու «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» ՀԿ և «Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն - Հայաստան» հիմնադրամ կոնսորցիումի կողմից:

Ծրագրի իրականացմանն աջակցել է Գյումրու համայնքապետարանը՝ տասը տարի ժամկետով անհատույց տրամադրելով համայնքապատկան շինություն՝ վերանորոգումից հետո որպես կենտրոնի տարածք օգտագործելու համար:

Ծրագրի համաֆինանսավորման համար նախաձեռնվել է նաև ֆոնդահայթայթման արշավ, որին մասնակցել են տասնյակ անհատներ աշխարհի տարբեր երկրներից:

**Ծրագրի բյուջե**. 67, 392 եվրո

The project has been co-funded by the European Union and implemented within the Small Grant Scheme of "Support to Civil Society Organizations Capacity Building" program funded by the European Union. The project has been implemented by Gyumri "Youth Initiative Centre" NGO and Caucasus Research Resource Center-Armenia Foundation.

The project was supported by Gyumri municipality by providing community-based space to renovate for free use for ten years.

The first year of the centre's operation has been also co-financed by online and in-person donations from different individuals and institutions.

**Budget**: 67, 392 EUR



# ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ՝ «ԲԱՑ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ. ԳՅՈՒՄՐՈՒ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՀԶՈՐԱՑՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ

# CAPACITY BUILDING TRAININGS: "OPEN YOUTH WORK: EMPOWERING YOUNG PEOPLE IN GYUMRI" PROJECT

**Երբ**. Մայիս - սեպտեմբեր, 2018

**Որտեղ**. Գյումրի, Հայաստան

**Խնդիր**. Բարձրացնել Գյումրիում երիտասարդական աշխատանքի ոլորտում ծառայություններ մատուցող պետական և ոչ-կառավարական կառույցների աշխատանքի որակը՝ երիտասարդների հետ աշխատող կազմակերպությունների և կառույցների ներկայացուցիչների կարողությունների զարգացման միջոցով:

**Նկարագրություն**. «Բաց երիտասարդական աշխատանք. Գյումրու երիտասարդների հզորացում» ծրագրի շրջանակներում Գյումրիում 2018թ. մայիս-սեպտեմբեր ամիսներին կազմակերպվել և անցկացվել են թվով 33 կարողությունների զարգացման դասընթաց: Կարողությունների զարգացման դասընթացներից 29-ը անցկացվել է Գյումրու «Երիտասարդների տուն» բաց երիտասարդական կենտրոնում, մյուս 4 դասընթացները տեղի են ունեցել Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի Գյումրու մասնաճյուղում՝ բուհի հետ փոխշահավետ համագործակցության շրջանակներում:

**When**: May - September, 2018

**Where**: Gyumri, Armenia

**Aim**: To increase the quality of public and non-governmental organizations providing services in the field of youth work in Gyumri through the capacity building of representatives of youth organizations and other relevant institutions and structures.

**Description**: In the framework of "Open Youth Work: Empowering Young People in Gyumri" project, 33 capacity building trainings were organized and conducted in Gyumri throughout the period of May - September, 2018. 29 out of 33 capacity building trainings were held at "Youth House" open youth centre and the other four trainings were held in the Gyumri branch of the Armenian State University of Economics within the scope of mutually beneficial cooperation with the University. Some of the topics of the trainings included the following:



Դասընթացների թեմաներն են եղել. «Դեռահասների տարիքային զարգացման հոգեբանական առանձնահատկություններ», «Դեռահասների իրավունքներ և իրավախախտումներ», «Պետական երիտասարդական քաղաքականություն», «Երիտասարդական աշխատանքի լուսաբանում», «Ոչ ֆորմալ կրթության գործիքների մշակում և կիրառում», «Երիտասարդական նախաձեռնողականության խթանում և կամավորություն», «Կոնֆլիկտների հաղթահարում և բանակցություն-ների վարում», «Երիտասարդների մասնագիտական կողմնորոշում և զբաղվածություն», «Երիտասարդների գրավոր և բանավոր ինքնաներկայացում», «Երիտասարդների ձեռներեցության խթանում»:

Դասընթացները նախատեսված են եղել երիտասարդական աշխատողների, երիտասարդական ծրագրերի համակարգողների, ուսուցիչների, հոգեբանների, կամավորների և այլ հետաքրքրված անձանց համար:

Դասընթացներից յուրաքանչյուրի տևողությունը եղել է 6 ժամ՝ ներառյալ ընդմիջումները:

Կարողությունների զարգացման դասընթացներին մասնակցել են 208 չկրկնվող երիտասարդներ:

“Psychological characteristics of adolescent development,” “Adolescent rights and offenses”, “State youth policy”, “Youth employment media coverage”, “Development and application of non-formal educational tools”, “Promotion of youth initiatives and volunteering”, “Conflict management and negotiations”, “Professional orientation and employment”, “Written and verbal self-presentation” and “Promotion of youth entrepreneurship”.

The trainings were designed for youth workers, youth projects coordinators, teachers, psychologists, volunteers and other interested people.

The duration of the each training was 6 hours, including breaks.

208 unique beneficiaries participated in capacity building trainings.





# ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԴՊՐՈՑ՝ «ԲԱՑ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ. ԳՅՈՒՄՐՈՒ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՀԶՈՐԱՑՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ

# RESEARCH SCHOOLS: “OPEN YOUTH WORK: EMPOWERING YOUNG PEOPLE IN GYUMRI” PROJECT

**Երբ**. Մայիս 21-25, օգոստոսի 13-17, 2018

**Որտեղ**. Գյումրի, Հայաստան

**Խնդիր**. Բարձրացնել Գյումրիում երիտասարդական աշխատանքի ոլորտում ծառայություններ մատուցող պետական և ոչ-կառավարական կառույցների աշխատանքի որակը՝ երիտասարդների հետ աշխատող կազմակերպությունների և կառույցների ներկայացուցիչների՝ հասարակագիտության ոլորտում հետազոտական կարողությունների զարգացման միջոցով:

**Նկարագրություն**. «Բաց երիտասարդական աշխատանք. Գյումրու երիտասարդների հզորացում» ծրագրի շրջանակներում Գյումրիում կազմակերպվել և անցկացվել են թվով երկու «Հետազոտական դպրոցներ»՝ յուրաքանչյուրը 5 աշխատանքային օր տևողությամբ, որոնց ընթացքում մասնակիցները ծանոթացել են որակական և քանակական հետազոտություն իրականացնելու մեթոդներին:

Դպրոցները մեկնարկել են հասարակագիտական հետազոտության ընդհանուր տրամաբանության քննարկմամբ, ապա անդրադարձ է կատարվել որակական հետազոտությունների առանձնահատկություններին: Ի թիվս որակական այլ մեթոդների, ներկայացվել են «Հաջողության պատմություններ» հավաքագրելու և ներկայացնելու մեթոդները: Ինչպես նաև հիմնական գիտելիքներ են փոխանցվել հարցումների իրականաց-ման, հարցաթերթերի մշակման վերաբերյալ:

Հատուկ ուշադրություն է դարձվել առցանց հարցաթերթերի ստեղծման հմտությունների փոխանցմանը: Մատուցվել են որակական և քանակական հետազոտությունների տվյալների վերլուծության հիմնական մոտեցումները: Դպրոցը եզրափակվել է արդի աշխարհում բաց տվյալադարանների ներկայացմամբ, քննարկվել են դրանցից օգտվելու ձևերը:

Երկու հետազոտական դպրոցներին ընդհանուր առմամբ մասնակցել է 28 անձ:

Մեկշաբաթյա ծրագրի ավարտին «Հետազոտական դպրոցի» մասնակիցները ստացել են հավաստագրեր:

**When**: May 21-25, August 13-17, 2018

**Where**: Gyumri, Armenia

**Aim**: Increase the quality of public and non-governmental organizations providing services in the field of youth work in Gyumri, through the development of research capacities in the field of social studies of the representatives of youth organisations and other relevant institutions and structures.

**Description**: In the framework of “Open Youth Work: Empowering Young People in Gyumri” project 2 research schools were organized and conducted in Gyumri each with 5 working days. During the schools, the participants were acquainted with the methods of qualitative and quantitative research. The schools started with the introduction to the general logic of social studies. Then, the peculiarities of qualitative research were touched upon. Among other qualitative methods, ways how to gather and present “success stories” were also presented. In addition, essential information was presented on how to elaborate questionnaires and conduct social surveys.

Special attention was paid to the creation of online questionnaires. The main approach to the analysis of qualitative and quantitative research data were equally provided. The schools were concluded with the introduction to open-source libraries in the modern world followed by the discussions on how to use them.

28 people participated in two research schools.

At the end of the one-week program, the participants of the “Research Schools” received certificates.





# ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ FINANCIAL REPORT 2018

Ֆինանսական ներդրումներն՝ ըստ ռազմավարական նպատակների

Financial investments according to strategic objectives




***ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿ 1.***
ԱՋԱԿՑԵԼ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆԸ

***STRATEGIC OBJECTIVE 1.***
TO CONTRIBUTE TO THE IMPROVEMENTOF THE SOCIAL-ECONOMIC CONDITIONS FOR THE YOUTH

***ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿ 2.***
ԽԹԱՆԵԼ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՆԱԽԱՁԵՌՆՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

***STRATEGIC OBJECTIVE 2.***
TO PROMOTE YOUTH INITIATIVENESS

***ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿ 3.***
ՆՊԱՍՏԵԼ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ԴԵՐԻ ԲԱՐՁՐԱՑՄԱՆԸ

***STRATEGIC OBJECTIVE 3.***
TO CONTRIBUTE TO INCREASING THE ROLE OF YOUNG PEOPLE IN THE SOCIETY

## ԴՐԱՄԱԿԱՆ ՀՈՍՔԵՐ / CASH FLOW

**Արժույթը՝ ՀՀ դրամ** / **Currency in AMD**




## ՀՈՎԱՆԱՎՈՐՆԵՐ / DONORS

**Արժույթը՝ ՀՀ դրամ** / **Currency in AMD**



# ԳՈՐԾԸՆԿԵՐՆԵՐ
# PARTNERS

ՀՀ Սպորտի և Երիտասարդության հարցերի նախարարություն

Ministry of Sport and Youth Affairs of the Republic of Armenia.

Գյումրու քաղաքապետարան

Gyumri Municipality

Հայաստանում Մեծ Բրիտանիայի դեսպանություն

British Embassy Yerevan

Հայաստանում ԱՄՆ-ի դեսպանություն

Embassy of USA in Armenia

ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամ Հայաստան

United Nations Population Fund

ՍԱԼՏՈ Արևելյան Եվրոպա և Կովկաս ռեսուրսային կենտրոն

SALTO Eastern Europe and Caucasus Resource Centre

Եվրամիության «Էրազմուս+» ծրագիր

European Union-Erasmus+ programme

Կուլտուր Ակտիվ

Kultur Aktiv

Բրեմանգեր Կոմյունե

Bremanger Kumunne

Աջակցություն ՀՀ ՔՀԿ-ների կարողությունների հզորացմանը

STRONG CSOs for Stronger Armenia

Խաղաղության կորպուսը Հայաստանում

Peace Corps Armenia

Դեպի Հայք

Birthright Armenia

Հրանտ Դինք հիմնադրամ

Hrant Dink Foundation

Հայկական Կարիտաս

Armenian Caritas

ԿԱՍԱ շվեյցարական մարդասիրական հիմնադրամ

"KASA" Swiss Humanitarian Foundation

Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն

Caucasus Research Resource Center-Armenia

Գյումրու տեխնոլոգիական կենտրոն

Gyumri Technology Centre

Շիրակի պետական համալսարան

Shirak State University

Շիրակի Տարածաշրջանային Պետական Քոլեջ

Shirak Regional State College

Գյումրու պետական դրամատիկական թատրոն

The State Drama Theatre Of Gyumri

«Arm Events » ոչ ֆորմալ խումբ

Arm Events

Ցայգ Մարզային հեռուստաընկերություն

Tsayg Regional TV

Շիրակ Հանրային հեռուստաընկերություն

Public Television of Shirak

Ռադիո Հայ Գյումրի

Radio Hay Gyumri

Դիզայն Բուտիք

Design Boutique

FOR YOUTH
WITH YOUTH
BY YOUTH

Պատրաստեց Լիդիա Արզումանյանը
Prepared by Lidia Arzumanyan

Ֆինանսական վերլուծությունը՝ Լիանա Հակոբյանի
Financial analysis by Liana Hakobyan

Խմբագիրներ՝ Կարեն Տերտերյան, Նեյթն Գրեհեմ
Editors: Karen Terteryan, Nathan Graham

Թարգմանություն՝ Մարիամ Ղարագյոզյան, Վալյա Մարտիրոսյան, Գայանե Առաքելյան
Translation: Mariam Gharagyozyan, Valya Martirosyan, Gayane Arakelyan

Լուսանկարները ԵՆԿ ՀԿ արխիվից
Photos from the YIC archive

© Գյումրու «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» ՀԿ

© Gyumri “Youth Initiative Centre” NGO